

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՐԵՄԻԱ
ՀԱՎԱՔԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒ

ԳՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՀԱՄԲԱՐՑՈՒՄԻ

ԲԻԱЙՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒՄԻ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
(ՊԱՏՄԱՐՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Ե. 00.03. «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆ – 2016

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГРЕКՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԱՄԲԱՐՑՈՒՄՈՎԻЧ

БИАЙНИЛИ-ՈՒՐԱՐՏՈՒՄԻ: ГОСУДАРСТВО И ОБЩЕСТВО
(ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой
степени доктора исторических наук
по специальности 07. 00.03 “Археология”

Ереван – 2016

Ասենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագործության ինստիտուտի գիտական խորհրդում:

Պաշտոնական ընդունմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Ա.Վ. Քոյսյան
պ.գ.դ., պրոֆ. Ա.Ս. Փիլիպոսյան
պ.գ.դ. Օ.Ս. Խնձկիկյան

Առաջատար կազմակերպություն՝ ԵՊՀ Պատմության ֆակուլտետի
Հնագիտության և ազգագրության
ամբիոն

Ասենախոտթության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հուլիսի 14-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Զարենցի 15):

Ասենախտությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Դնագիտության և ազգագործական հիմնադրամի գործադրանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. հունիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու  Ր.Ս. ՄԵԼքՈՆՅԱՆ

Тема диссертации утверждена на заседании ученого совета Института археологии и этнографии НАН РА

Официальные оппоненты: д.и.н., проф. Косян А.В.
д.и.н., проф. Пилипосян А.С.
д.и.н. Хнккиян О.С.

Ведущая организация: Кафедра археологии и этнографии факультета истории ЕГУ

Защита состоится 14-го июля 2016 г. в 14.00 часов, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца, 15).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и этнографии НАН РА

Автореферат разослан 14-го июня 2016 г.

Ученый секретарь специализированного совета:
кандидат исторических наук

H. Wier

Мелконян У.С.

ԱՇԽԱՏԱՍՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ արդիականությունը: Աքենենյան տերության կործանումից հետո բարելոնյան սեպագիր դարությունը դադարում է հիշատակել «Ուրարտու» Երկրանունը (բարել. «Ուրաշտու»)¹, իսկ նրա տեղը գրադարձնում է «Արմինի»-ն²: Դրանից շատ ժամանակ չեր անցնելու, որպեսզի մոռացվեր սեպագիր գրահամակարգն ընդհանրապես: Կանա ժայրին և այլուր հանդիպելով սեպագիր գրեթի՝ պատճահայր Մովսես Խորենացին չեր թաքցնում իր զարմանքը. «(այրասիրտն այն և կաթոտն Շամիրամ) ... զամենայն Երեսս քարին իրոն գրչա զմոն հարթեալ՝ քազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ»: Ապա շարունակում էր. «Եւ ոչ միայն այս, այլ և ի քազում տեղիս յաշխարհին Հայոց արձան հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայտ գրել. և ի քազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»³:

Թվում է Ուրարտուն Խորենացուն հայտնի չեր, իսկ այն ամենը, ինչը մնացել էր ուրարտական շրջանից, նա վերագրում էր ասորեստանյան թագուիի Շամիրամին: Մյուս կողմից Պատմահայրը, իր «Հայոց պատմության» մեջ ոչ քիչ էցեր հատկացնելով Շամիրամին, զարմանալի կերպով շրջանցում է այն դարաշրջանը, որը կարելի է ժամանակագրել իրու «ուրարտական», ասելով՝ «Թողով զոք կարևորագոյնսն ի բանից՝ ասսացուք որ ինչ հարկաւորն է: Վերջին սոցա, որը առ Ասորեստանեաց թագաւորութեամբն և որք ի Շամիրամայ և կամ թէ ի Նիմոսէ՝ զմերս ասեն Պարոյր առ Սարդանապալլաւ, որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարրակայ Սարի, բառնալով գրագաւորութիւնն ի Սարդանապալլայ»⁴:

Արդյո՞ք Պատմահայրը չեր ցանկանում մանրամասնել, որ Շամիրամի ժամանակ Հայաստանում իշխել են ինչ-որ օտարեներ, ինչի մասին ավելի ուշ նշում է 7-րդ դ-ի պատմիչ Սեբեոսը՝ Օրանց համարելով «ասորեստանցիներ»⁵: Պատահական է թե ոչ, բայց Շամիրամից հետո և մինչև Պարույր Սկայորդի ընկած շրջանը հայ պատմիչների հանար այդպես էլ մնաց որպես ինչ-որ «քրոնակալներ»-ի կամ «ոչ ցեղակիցներ»-ի պատմության շրջան, որոնք իշխել են «ոչ ըստ ազգի» և տիրել հայոց աշխարհին⁶:

¹ Ամփոփ տե՛ս Salvini M. 2015, Urartu. A. Philologisch, “Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer Archäologie” 14·5./6., S. 394.

² Geller M.G., Traina G. 2013, “Tigranu, Crown Prince of Armenia”: Evidence from the Babylonian Astronomical Diaries, “Klio” 95, pp. 447-454.

³ Սովուն Խորենացի, Պատմութին Հայոց, Գիրք Ա, Գլուխ ԺԶ (Երևան, 1991):

⁴ Սովուն Խորենացի, Պատմութին Հայոց, Գիրք Ա, Գլուխ ԲԱ [ԻԲ] (Երևան, 1991):

⁵ Սեբեոս, Պատմություն, Գլուխ Ա, էջ 12-13 (Քննական բնագիրը՝ Գ.Վ. Արարյանի, արևելահայերեն բարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի, Երևան, 2005):

⁶ Տե՛ս, օրինակ, Հայաստան Դրասիանակերտոցի, Հայոց պատմություն, էջ 22-23 (ՀՅովիանու կարդիկոսի Դրասիանակերտոցոյ, Պատմութին Հայոց), Աշխարհաբար բարգմանությունը և ծանոթագրությունները՝ Գ.Բ. Թոսումյանի, Երևան, 1996):

Ցավոք, Ուրարտուի պատմության ու մշակույթի ուսումնասիրությունը մինչ օրս մնում է հայագիտության առավել քաղաքականացված ոլորտներից մեկը: Ուրարտուագիտական հարցերը հաճախ խիստ պարզունակեցմելով՝ անփոփում են ուրարտուացիների՝ տեղաբնիկների, թե՝ Եկվորներ լինելու կամ ընդհանրապես՝ «Ուրարտու», «ուրարտացի», «ուրարտերեն», «ուրարտական» եզրերի կիրառելիության շորջը ծավալված անհմաստ բանավեճերով: Փոխարեն՝ ուրարտուագիտության, ինչպես նաև ընդհանրապես՝ հայագիտության իրական խնդիրները, այդ թվում նաև հայ ժողովրդի պատմության հնագույն և վաղ փուլերի հետ կապված բազում հարցեր հաճախ անտեսվում են և նղվում հետմահստրը:

Ավելին, վերջին տասնամյակում փորձ է արվում մասսայականացնել նման տրամադրությունները և անգամ դասագրքեր են ներմուծվում տեսակետներ, որոնց գիտական հիմնավորումը հեղիեղորոշ է, իսկ փաստերը մեկնաբանվում են կամայականորեն կամ ընդհանրապես զուրկ են գիտականությունից: Առավել անընդունելի է, եթե նման տրամադրությունները մոլուք են գործում ակադեմիական շրջանակներ: Այս երևույթները մեզ շատ են մտահոգում և այն պնդումները, որ պատմագիտության հետ կապված իրավիճակը շատ ավելի վատթար է, օրինակ, հարլան Արքեթզանում, արդարացում չէ:

Մտահոգիչ են նաև այն միտունները, որը մենք տեսնում ենք արևմտյան հետազոտողների վերջին շրջանի աշխատանքներում՝ կապված Ուրարտուի, ուրարտական տերության երնիկ կազմի և ուրարտահայկական՝ այլև կասկած չհարուցող փոխանչությունների հետ կապված: Դատկապես վերջին տարիներին նկատվող այդ նոտեցումը կոչել ոչ այլ կերպ, քան «հիպերբռնադատական», մենք չենք կարող⁷: Ավելին, երբեմն անգամ կասկածներ են հնչում արենենյան արձանագրություններում հանդես եկող Արմինան և հունական առյուրներում հիշատակվող արմեններին Հայաստանի և հայերի հետ նույնականացնելու հարցում⁸: Սա անընդունելի է: Առկա են լուրջ կրվաներ՝ պնդելու համար հայերենի կրողների ներկայությունն այստեղ մինչուրարտական շրջանում և վիճարկել դա անհմաստ է: Այլ հաղու է, թե ինչ դերակատարություն են նրանք ունեցել ուրարտական տերության կազմավորման գործում, ինչպիսի փոխհարաբերությունների մեջ կարող էն լինեն հայկական իշխանությունները ուրարտական նվաճողների հետ տերության կազմավորման շրջանում, կազմավորումից հետո և անկման նախօրեին, ինչպիսի տարածվածություն ուներ հայերենը և ինչ

⁷ Այս մասին մենք բարձրածայնել ենք Կայիֆորնիայի համալսարանի Կոտսենի անվան հնագիտության ինստիտուտում կայսցած հայոցիտական միջազգային գիտաժողովին ներկայացված մեր զեկույցում (“The Current State of Urartology: Achievements, Problems, and Perspectives”, International conference “Current Practices in Armenian Studies: the Creation and Visibility of New Knowledge”, 31 May – 1 June, 2014, The Cotsen Institute of Archaeology, University of California, Los Angeles, USA).

⁸ Kroll S., Roaf M., Zimansky P. 2012, Afterword: The Future of Urartu’s Past, in: Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M., Zimansky P. 2012 (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, “Acta Iranica” 51, Louvain, pp. 448-449.

Փիտսառնչություններ են նկատվում ուրարտերենի հետ, ինչ դերակատարություն են ունեցել հենց իրենք՝ ուրարտական իշխողները, հայերենի տարածնան գործում՝ լեռնաշխարհի տարածքում իրականացրած լայնածավալ վերաբնակեցումների հենց քաղաքականությամբ, արդյո՞ք հայերն էին կազմում ուրարտական հասարակության գինվորական խավը, ինչպես ենթադրում են որոշ հետազոտողներ⁹:

Ուրարտական սեպագիր աղբյուրները, որոնք մերը ընդ մերք համալրվում են նոր տեքստերով, միայնակ այլև չեն կարող խթան հանդիսանալ ուրարտագիտության առաջընթացի համար և ապագայում իրականացվելիք նոր ուսումնասիրություններում դրանք ծառայելու են հիմնականում որպես պատմական հետաճարեն: Անկասկած է, որ իր խոսքն է շարունակելու ասել հնագիտությունը, բայց ոչ միայն հնագիտությունը: Ուրարտագիտությունը կարիք ունի համալիր ուսումնասիրությունների, մինչդեռ, իրականացվող աշխատանքները սվորաբար դուրս չեն գալիս կոնկրետ բնագավառի սահմաններից, և զգացվում է համալիր հետազոտությունների խիստ պակաս:

Ավագը վերաբերում է Բիայմիլի-Ուրարտուի ուսումնասիրության բոլոր բնագավառներին՝ լինի ոյս քաղաքական պատմություն և պատմական աշխարհագրություն, պետական կարգ, տնտեսություն և սոցիալ-հասարակական կառուցվածք, երմիկ պատմություն, լեզու և դպրություն, արվեստ, հավատալիքներ և կրոն: Միաժամանակ, չչետք է մոռանալ, որ ուրարտական քաղաքակրթությունը հիմնարկեցված և մասնավորապես հիմնածավորասիական տիկի քաղաքակրթություն է, և պատմահամեմատական գուշակերները կարող են թույլ տալ վերհանելու աղբյուրներում կարծես թե չնշմարվող, սակայն, իրականում, սպասելի ասպեկտներ:

Այդ առումով Յայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթների ուսումնասիրությունը արդիական է բոլոր ժամանակներում: Թենայի ուսումնասիրությունը թույլ է տալիս ուրվագծելու այն հիմքերը, որոնց վրա ծնունդ առավ ուրարտական քաղաքակրթությունը և որպես ժառանգություն՝ իր կնիքը թողեց Յայկական լեռնաշխարհի լանդշաֆտի ու նրա բնակչության վրա: Թենան հավասարապես կարևորություն է ներկայացնում թե՛ հայագիտության, և թե՛ հայրենի ու համաշխարհային արևելագիտության համար:

Աշխատանքի նախական ու խնդիրները: Սույն ատենախոսական հետազոտությունը նվիրված է Բիայմիլի-Ուրարտու պետության կառուցվածքի ուսումնասիրությանը: Մեր նախատակն է համակողմանի ուսումնասիրության ենթարկել հիմնախնդիրը՝ մինչ օրս հայտնի գրավոր և հնագիտական նյութի ամբողջական հետազոտության հիմնա վրա, հնարավորինս բացահայտել բնագավառի չլուսաբանված կամ քիչ լուսաբանված հարցերը, մատնանշել այն խնդիրները, որոնց լուծնան

⁹ Diakonoff I.M. 1991, Sacrifices in the City of Teishebâ (UKN 448) – Lights on the Social History of Urartu, “Archäologische Mitteilungen aus Iran”, Neue Folge, 24, Berlin, pp. 19-20; նույնի՝ 1992, First Evidence of the Proto-Armenian Language in Eastern Anatolia, “Annual of Armenian Linguistics” 13, Cleveland, p. 53.

հեռանկարները, մեր իմացության սահմաններում, թեև թվում են խստ աղոտ, բայց փոխարժեն՝ հնարավոր է թվում մատնամշել մոտեցման ուղիներ և, առնվազն, ուրվագծել ընդհանուր պատկեր: Այդ առումով հինարաջավորասիական գուգահեռները կարող են ուղենիշ ծառայել, իհարկե, երբևէ չփարձելով տուրք տալ մեխանիկական տեղայնացումներին: Այդ կերպ Բիայնիլի-Ուրարտուի ուսումնասիրության գործում շատ հարցեր, թեկովակ՝ արյուրագիտական սահմանափակ նյութի պայմաններում, կարող են գտնել օբյեկտիվ լուծումներ:

Ուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական

սահմանները: Նետազոտությունն ընդգրկում է ժամանակագրական լայն շրջանակ և չի սահմանափակվում Յայկական լեռնաշխարհում ուրարտական գերիշխանության դարաշրջանով՝ թ.ա. 9-7-րդ դդ.-ով: Տիպարանական ընդհանրությունները, գուգահեռներն ու փոխազդեցությունները վեր հանելու նպատակով աշխատանքում խորությանը արծարծվում են նաև հին Արաջավոր Ասիայի երկրների քաղաքական, տնտեսական, սոցիալ-հասարակական, ռազմական պատճությանը վերաբերող հարցեր՝ սկսած թ.ա. 3-րդ հազ.-ից ընդհուպ մինչև թ.ա. 2-րդ դ.:

Ուսումնասիրության աշխարհագրական սահմանները հիմնականում վերաբերում են Յայկական լեռնաշխարհին ու հարակից երկրներին՝ ընդգրկելով Յայաստամի Յանրապետության և Անրկայիս Նախիջևանի Ինքնապար Յանրապետության տարածքները, Թուրքիայի Յանրապետության արևելյան, Իրանի Խոլանական Յանրապետության հյուսիս-արևմտյան շրջանները, ինչպես նաև Անրկայիս Սիրիայի Արաբական Յանրապետության և Իրաքի Յանրապետության հյուսիսային հատվածները, որոնք մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում բիայնական/ուրարտական պետության կազմում էին կամ գտնվում էին նրա քաղաքական ազդեցության գոտում:

Յինահնորի ուսումնասիրվածության աստիճանը: Չնայած բազմաթիվ սկզբանաբյուրների և ուսումնափրությունների առկայությանը, հիմնախնդիրը գերազանցապես մնացել է չըլուսաբանված, քիչ չեն նաև թերի, ոչ լիակատար պատկերացումները: Դա միայն նաևսամբ է պայմանավորված մատչելի արյուրների սակավությանը, ինչը, իր հերթին, հետազոտողին չի մղել ձեռնամուխ լինելու խնդրի՝ հնարավորինս համակողմանի ուսումնասիրությանը: Քիմնախնդիրին ամողադարձել են սակավաթիվ հեղինակներ, իսկ վերջին ամփոփիչ ուսումնափրությունների հրատարակությունից անցել է արդեն երեսուն տարի¹⁰: Անցած տասնամյակներում լույս են տեսել ընդհանուր մի քանի հոդված, որոնք ավելի շուտ ունեն հրապարակախոսական բնույթ կամ դրանց հեղինակները բավարարվել են սույն տեսական դիտարկումներով՝ դուրս չգալով անցյալում արդեն իսկ հրատարակված նյութի շրջանակներից, շատ դեպքերում անհաղորդ

¹⁰ Tarhan M.T. 1983, The Structure of the Urartian State, “Anadolu Araştırmaları” 9, İstanbul, 295-310; Zimansky P.E. 1985, Ecology and Empire: The Structure of the Urartian State, “Studies on Ancient Oriental Civilizations” 41, Chicago; Тирацян Г.А., Кошеленко Г.А. 1985, Южное Закавказье, в кн. Кошеленко Г.А. (отв. ред.), Археология ССР, том. 7. Древнейшие государства Кавказа и Средней Азии. Москва, с. 24-40.

մնալով նաև գրավոր և հնագիտական նոր աղբյուրների ընձեռած հնարավորություններին: Կարելի է փաստել, որ հիմնախնդրի ուսումնասիրությունը թերի է, առկա աշխատանքների մեջ նասը՝ այլևս հնացած, իսկ նոր աշխատանքները՝ հաճախ ժամանակավորեալ:

Աստենախոսության փորձաքննությունը: Աստենախոսությունը քննարկվել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագործության հնասիրության վաղ հնագիտության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած երեք տասնյակ հոդվածներում, ուսումնասիրության արդյունքները գեկուցումներով ներկայացվել և քննարկվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հեմքը: Հետազոտությունը կատարված է գրավոր (սեպագիր) և հնագիտական սկզբնաղյուրների հիման վրա: Ըստ անհրաժեշտության՝ օգտագործվել են նաև այլ աղբյուրներ և գիտական դիսցիպլինների տվյալներ (պատմասոցիոլոգիական, սոցիալ-հնագիտական, հնակլիմայաբանական, լեզվաբանական և այլն): Գրավոր սկզբնաղյուրների հիմնական խումբն են կազմել ուրարտական և համաժամանակյա նորասորենստանյան սեպագիր աղբյուրները: Աշխատանքում, ըստ անհրաժեշտության, օգտագործվել են նաև Ք.ա. 3-րդ – 1-ին հազ-ների գրավոր աղբյուրներ՝ շումերական, աքքանական, միտաննական, միջինասորենստանյան, խեթական, ուգարիթյան, նորբարելունյան և աքեմենյան շրջանի սեպագիր տեքստեր: Հետազոտությունը կատարելու ընթացքում կարևորագույն դերը վերապահվել է Բիայնիլի-Ուրարտուի հնագիտությանը. ուսումնասիրության ընթացքում քննության է առնելու ուրարտական 300-ից ավելի, իսկ ընդհանուր առմանք՝ Յայկական լեռնաշխարհում և նրան հարակից շրջաններում վկայված շուրջ 1000 հնավայր:

Աշխատանքում օգտագործվել են հայերեն, ռուսերեն, թուրքերեն և Եվրոպական հիմնական լեզուներով գրված ընդհանուր կամ նաև պատրաստված հարցերի վերաբերող բազմաթիվ ուսումնասիրություններ (2300 անուն):

Եվոպաստության մեթոդաբանական հեմքը: Աշխատանքի մեթոդաբանական հիմքն է կազմում պատմահամենատական մեթոդը: Ուսումնասիրության ընթացքում առաջնորդվել ենք սկզբնաղյուրների համադրման, համակողմանի և քննական վերլուծության սկզբունքներով: Յավանական ենք համարել այն եղանակացությունը, որի օգտին են խոսում մի քանի փաստեր:

Աշխատանքի գիտական նորույթը ու գործնական նշանակությունը: Բիայնիլի-Ուրարտուի պատմության ուսումնասիրության բնագավառում մեր աշխատանքները սկսել ենք դեռևս 2000-ական թթ-ի սկզբներին՝ կապված Յայկական լեռնաշխարհի և նրան սահմանակից հյուսիսարևմտյան Իրանի տարածքներում տեղորոշվելով Սաննայի թագավորության պատմության ուսումնասիրության հետ: Այնուհետև, ավելի ընդլայնելով հետազոտության դաշտը և ընդգրկելով Բիայնիլի-Ուրարտուի պատմության՝ ըստ երթյան բոլոր բնագավառները (սեպագիր աղբյուրների հրատարակություն, պատմության, հնագիտության և պատմական աշխարհագրության հարցեր, տնտեսություն, կրոն և

հավատալիքներ), հավաքել և հանակարգել ենք հրապարակի վրա եղած գրեթե ամբողջ նյութը, հանդես եկել բազմաթիվ՝ շուրջ 50-ի հասնող գիտական հրապարակումներով և գեկույցներով:

Ներկայացված ուսումնասիրությունը նախ և առաջ ուղղված է գիտական աշխարհին և չունի գուտ ճանաչողական բնույթ: Նրանում լրաբանվում են Բիայնիի-Ուրարտուի պատմության երրեսէ չքննարկված կամ վիճահարույց ու թերի ուսումնասիրված բազմաթիվ խնդիրներ, որոնք վերարձրժվում են նորովի: Աշխատանքը հետազոտողների ուշադրությունը է հրավիրում հատկապես այդ խնդիրների վրա և կոչ է անում քննարկել դրանք: Աշխատանքն առաջարիտ է հարցադրումներ, որոնք կարիք ունեն պատասխանների և կարող են հետագա ուսումնասիրությունների առարկա հանդիսանալ: Բացի դա, ուսումնասիրությունը կարող է օգնել հասկանալու համար բիայնական պետության բնույթը և առանձնահատկությունները. նրա քաղաքական, ռազմական և կրոնական համակարգի, հասարակության կառուցվածքի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ կապված տարածնույթ հարցեր: Ի վերջո՝ աշխատանքի նպատակն է նպաստել հայագիտության մեջ խիստ քաղաքականացված այս քննագիրը իր քննականոն հում՝ գիտական հարթակ տեղափոխելուն: Այս կարող է բավարարել հիմնախմբով մտահոգ գիտական շրջանակների և ընթերցող խավերի հետաքրքրությունը:

Աշխատանքի կարուցվածք: Աշխատանքը բաղկացած է երկու հատորից: Առաջին հատորը ներկայացնում է հիմնական տեքստը և կազմված է առաջաբանից, չորս գլուխմերից, եզրակացությունից, ինչպես նաև հապակումների և օգտագործված գրականության ցանկերից՝ ընդհանուր առանք՝ 546 էջ:

Աշխատանքում քննարկված հարցերը նաև նպաստելու, լրացնելու կամ տեսամելի դարձնելու նպատակն է ծառայում երկրորդ հատորը (372 էջ): Այս իրենից ներկայացնում է հավելված և ընդգրկում է 28 աղյուսակ, 52 հեղինակային քարտեզ բացատրագրերով և 600-ից ավելի նկարներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՍԱՌՈՅ ԲՈՎԱՌՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱՐԱՐԱՆ

Առաջաբանում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակն ու խնդիրները. ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, հիմնախմբի ուսումնասիրվածության աստիճանը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Գլուխ Ա ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գլուխը բաժանված է վեց բաժինների: Առաջին բաժնում («Իշխանության կառուցվածքը Բիայնիի-Ուրարտուում») ներկայացվում է բիայնական իշխանության աստվածապետական բնույթը և արքայական իշխանության շուրջը ծնակվորված պատկերացումները: Դիցարանի գերազույն՝ խալիի աստվածն ընկալվում էր իրեւ արքա, այդ սկզբունքով էր կազմակերվում նաև պետության կառավարումը: Պետության փաստացի

առաջնորդները, ովքեր մեզ հայտնի են որպես «արքայական» անուններ կրող անձինք, հանդես էին գալիս իրու և աստծո տեղապահներ՝ նրա անունից իրականացնելով աստված-արքայի «Երկրային» գործառությները, այդ բվում՝ քրմական, ռազմական, վարչական, տնտեսական և դատական: Դա արտացոլվում է նաև նրանց կրած և արքայական իշխանության հետ կապված տիտղոսներում, այժ է LUGAL/MAN (=BUZÚR)՝ «պահապան», ^{LÚ}sie musi ^{LÚ}UKU^{MEŠ} (աբբ. rē'ū^{LÚ}SIPA kēnu ša nišē^{LÚ}UKU^{MEŠ}) «ժողովուրդների ճշմարիտ հովիվ», (^{LÚ}ipšusē^{LÚ}UTÚL/KAM-še՝ «մշակ (՝), հողագործ» (՝), և ^{LÚ}A.ZUx-li՝ «պատգամախոս»¹¹: «Ճշմարիտ հովիվ», «քարի հովիվ» և ընդհանրապես՝ «հովիվ-արքա»-յի ընկալում ուներ ընդհանուր հիմնառաջավրահական հետնախորը¹² և հանգում էր Ք.ա. 3-րդ – 2-րդ հազ-ների հյուսիսսիրիական և հյուսիսիջաջատքայն ավանդույթներին¹³:

Նույն բաժնի տարբեր ենթաքաֆիններում քննարկվում են արքայական իշխանության ժառանգորդությանը, երկրի վարչական բաժանմանն ու վարչական բարեփոխումներին, վարչաքաղաքական միավորների սահմաններին և դրանց տեղագրությանը, տեղերում իշխանության իրականացման ձևերին և միջոցներին վերաբերող հարցեր: Մանրամասն անդրադարձ է կատարվում երկրի պաշտոններությանը և սեպագիր տեքստերում պաշտոններ մատմանշող շուրջ երեք տասնյակ տերմինների քննությանը: Առանձին ուշադրություն է դարձվում Քիայնիլի-Ուրարտու սեպագրի նույտին և բիայնական դպրության ակունքներին: Ավելացնելու համար է, որ բիայնական սեպագիր դպրությունը մեծապես ազդեցիլ էր նորասորեստանյան դպրոցից և կիրառում էր սեպագրության նորասորեստանյան ոճը¹⁴: Այն կարող էր այստեղ բերվել շրջիկ դպրության կողմից¹⁵: Բայց նյոււ կողմից պետք է նկատել, որ բիայնական սեպագրությանը առաջնային դեր է ունենալու համար:

¹¹ Grekyan Y.H. 2005, Urartian Oracle Texts? (Preliminary Study), in: Дандамаева М.М., Коган Л.Е., Козлова Н.В., Медведская И.Н. 2005, ЭДУББА вечна и постоянна. Материалы конференции, посвященной 90-летию со дня рождения Игоря Михайловича Дьяконова, Санкт-Петербург, pp. 42ff.

¹² Cachia N. 1997, The Image of the Good Shepherd as a Source for Spirituality of the Ministerial Priesthood. Roma, pp. 30-31; Westenholz J.G. 2004, “The Good Shepherd”, in: Panaino A., Piras A. 2004 (eds.), Schools of Oriental Studies and the Development of Modern Historiography. Proceedings of the Fourth Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project, Held in Ravenna, Italy, October 13-17, 2001. Milan, pp. 281ff.

¹³ Hallo W.W. 1980, Royal Titles from the Mesopotamian Periphery, “Anatolian Studies” 30, pp. 194-195.

¹⁴ Wilhelm G. 1986, Urartu als Region der Keilschrift-Kultur, in: Haas V. 1986 (Hrsg.), Das Reich Urartu: Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v.Chr., „Xenia“ 17, Konstanz, S. 95-113; Salvini M. 2014a, The Spread of the Cuneiform Culture to the Urartian North (IX-VII Century BCE), in: Geller M.J. 2014 (ed.), Melammu. The Ancient World in an Age of Globalization, Proceedings of the Sixth Symposium of the Melammu Project, held in Sophia, Bulgaria, September 1-3, 2008, Berlin, pp. 299-328.

¹⁵ Ծրջիկ դպրության համար սեպագրությանը առաջնային դեր է ունենալու համար, օրինակ, Cohen Y. 2004, Kidin-Gula – the Foreign Teacher at the Emar Scribal School, “Revue d’assyriologie et d’archéologie orientale” 98, Paris, pp. 81-82 and n. 4; Weeden M. 2011, Adapting to New Contexts: Cuneiform in

նորասորեստանյան սեպագրության մեխանիկական կրկնությունը չէր և իր ակունքներով հաճգում էր Ք.ա. 2-րդ հազ-ի հյուսիսսիրիական և հյուսիսիջագետթյան սեպագրական դպրոցներին¹⁶. Կապող օրակ կարող էր ծառայել տավրոսյան գոտում գտնվող և սեպագիր քաղաքակրթությանը հաղորդակից որևէ երկիր, հնարավոր է՝ Շուբրիան, Ալզին կամ Կումնեն: Այդ նույն ենթաքանում անդրադարձ է արվում նաև պետական փաստարքերի կազման սկզբունքին, ներքին և միջավայրական գրագրությանը, արքունի դիվանների ստեղծմանն ու սեպագիր ուսուցանող դպրոցների գոյությանն առնչվող վկայություններին¹⁷:

Առանձին ենթաքանով քննարկվում է Բիայնիլի-Ուրարտուում տարիների հաշվարկման համակարգը: Այստեղ հաշվարկն իրականացվում էր ոչ թե ըստ արքաների կառավարման տարիների, ինչպես դա արվում էր, օրինակ, Բաբելոնիայում Ք.ա. 13-րդ դ-ից սկսած¹⁸ կամ անվանակոչվում *limmu*-պաշտոնյաների անունով, ինչպես Ասորեստանում էր¹⁹, այլ կիրառվում էր շատ ավելի արխակի համակարգ: Այդ տարին անվանակոչվում էր նախորդ տարվա գլխավոր իրադարձության անունով²⁰: Տարիների թվագրման այդ համակարգը հայտնի էր դեռևս Ք.ա. 3-րդ հազ-ից և Միջագետքում կիրապվում էր մինչև Բաբելոնիայում հաստատված կասախտակամ հարստության իշխանության առաջին շրջանը²¹: Այդ համակարգը, ինչպես բիայնական սեպագիր դպրությունը, հնարավոր է, հանգում էր հյուսիսսիրիական ավանդությանը: Մեզ են հասել տարիների անվանակոչման չորս տեքստ, որոնցից հրատարակված են երեքը²²:

Առաջին գլխի երկրորդ բաժնում քննարկվում է Բիայնիլի-Ուրարտուի տարածքը պետության գոյության տարբեր փուլերում և պատմական աշխարհագրության առնչվող հարցեր: Թե՛ գրավոր և թե՛, հատկապես, հնագիտական տվյալների հիման վրա վեր են հանվում պետության բուն սահմանները Յայկական լեռնաշխարհի ներսում և ուրվագծում լեռնաշխարհից դուրս ընկած նրա ազդեցության գոտին: Ցույց է տրվում, որ լեռնաշխարհից ներս ուրարտական պետությունն ուներ համեմատա-

Anatolia, in: Radner K., Robson E. 2011 (eds.), The Oxford Handbook of Cuneiform Culture, Oxford, pp. 597ff.

¹⁶ Дьяконов И.М. 1963а, Урартские письма и документы, Москва-Ленинград, с. 19 сл.; Diakonoff I.M. 1989, On Some New Trends in Urartian Philology and Some New Urartian Texts, „Archäologische Mitteilungen aus Iran,” Neue Folge, 22, Berlin, p. 79.

¹⁷ Բիայնական «դպրոցական» տեքստերի համար տես CTU IV, CT Ay-1; Çilingiroğlu A., Batmaz A. 2014, Ayanis Kalesi 2009-2012 Kazıları, “Kazi Sonuçları Toplantısı” 35/1, Ankara, s. 178.

¹⁸ Brinkman J.A. 1976, Materials and Studies for Kassite History, vol. I. A Catalogue of Cuneiform Sources Pertaining to Specific Monarchs of the Kassite Dynasty, Chicago, pp. 397ff.

¹⁹ Millard A. 1994, The Eponyms of the Assyrian Empire 910-612 BC, “State Archives of Assyria Studies” 2, Helsinki, 1ff.

²⁰ Дьяконов И.М. 1963а, Урартские письма и документы, Москва-Ленинград, с. 23 сл.

²¹ Horsnell M.J.A. 1999, The Year-Names of the First Dynasty of Babylon, vol. I. Chronological Matters, the Year-Name System and the Date-Lists. Hamilton, Ontario, 1999, pp. 3ff.

²² ԿԿՀ, 412₁₋₅, 412a₁₋₃; CTU IV, CT Tk-1₁₋₅, CB Ba-6₁₋₃, CB Ay-51₁₋₂.

բար սահմանափակ տարածք. Վաճա և Ուրմիա լճերի միջև ձգվող միջնաշխարհից դուրս ուրարտական տիրապետությունը զբաղեցնում էր լեռնաշխարհի՝ գերազանցապես հարրավայրային/երկրագործական գոտիները և այդ գոտիներն իրար կապող «միջանցքներ»-ը: Դրանից դուրս ընկած ողջ տարածքը՝ գերազանցապես նախալեռնային և բարձրլեռնային շրջաններում, ուրարտական տիրապետության տակ չին գտնվում: Այդ շրջաններ ուրարտական հշտանություններն ուժեին սահմանափակ մուտք, գերազանցապես՝ ռազմական արշավանքների տեսքով:

Առաջին գլխի երրորդ բաժնում քննարկվում է Հայկական լեռնաշխարհի բնակչության մոտավոր թվաքանակը ուրարտական գերիշխանության շրջանում: Առկա աշխատանքներում լեռնաշխարհի բնակչության թիվը որոշվում է 6-7 մլն. մարդու սահմաններում՝ հենվելով բացառապես «Սարդուրյան տարեգործության» հայտնած մի տեղեկության մեկնարանության վրա²³: Այդ առումով մենք դիմել ենք նոր մեթոդաբանության: Հենվելով հնագիտական և գրավոր աղբյուրների վրա և դիմելով վիճակագրական մեթոդին՝ Բիայնիլի-Ուրարտուի համար մենք ենթադրում ենք շորջ 1 մլն, իսկ Հայկական լեռնաշխարհի ողջ բնակչության համար՝ 1.5-1.75 մլն մարդ: Ըստ որում, Բիայնիլի-Ուրարտուի բնակչության ճնշող մասը ծավալով կերպությունների արդյունքում (ընդուակ մինչև 75 տոկոսը կամ մոտ 0.75 մլն. մարդ):

Առաջին գլխի չորրորդ բաժնում քննարկվում են բնակավայրերի տիպերը Բիայնիլի-Ուրարտուում՝ ըստ սեպագիր (ուրարտական և նորասորեստանյան) և հնագիտական աղբյուրների: Բաժնի հիմնական քննարկումը, սակայն, վերաբերում է «քաղաք» հասկացությանը և «քաղաքաշինություն» եզրույթի կիրառելիությամբ Բիայնիլի-Ուրարտուում քննարկվող շրջանի համար: Սեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքաշինությունն այսեղ ըստ եռթյան նույնանում էր պալատական/տաճարային համալիրի կառուցման հետև և «քաղաքաշինություն» եզրույթը, թերևս, կիրառելի է միայն այն պատճառով, որ այդ կենտրոնին կից կամ մերձավորությամբ գտնվել է այդ կառույցը սպասարկելու կոչված բնակելի հատված՝ այսպես կոչված «արտաքին քաղաք»-ը կամ կից բնակատեղին: Անրույթյուններից գուրկ բնակելի հատվածում հաճախ պետության կողմից և «պետ-ստանդարտ»-ի համաձայն կառուցված ընդարձակ առանձնատներում տեղավորվում էին ամրոցում ծառայելու կոչված ռազմավարչական և քրմական անձնակազմի անդամները և նրանց ընտանիքները: Քաղաքաշինական այս մոտեցումը հանգում էր ք.ա. 2-րդ հազ.-ի միտաննական ավանդույթին: Այդ շրջանի քաղաքները ևս կազմված էին ամրություններից գուրկ «ստորին քաղաք»-ից (աքք. *adasšu*) և «միջնարերդ»-ից (աքք. *ki/erlu*), որտեղ գտնվում էր տաճարը²⁴:

²³ Дьяконов И.М. 1988а, Жертвоприношения в Тейшебайни (УКН 448), “Кавказско-близкневосточный сборник” VIII, Тбилиси, с. 60 сл.; Diakonoff I.M. 1991, Sacrifices in the City of Teišebâ (UKN 448) – Lights on the Social History of Urartu, “Archäologische Mitteilungen aus Iran”, Neue Folge, 24, Berlin, p. 19, n. 55.

²⁴ Oppenheim L.A. 1960, The City of Assur in 714 B.C., “Journal of Near-Eastern Studies” 19/2, Chicago, pp. 131-132.

Բիայնիլի-Ուրարտուում «քաղաք»-ը պետության գլխավոր հենարանն էր, հանդիսանում էր ռազմավարչական և տնտեսական կենտրոն, այրտեղ էին գտնվում պաշտամունքային գլխավոր կառուցմերը և պետական պահուստները: Ուրարտական «քաղաք»-ի կենտրոնական կառուցը պարսպապատ պալատական/տաճարային համալիրն էր, որն աչքի էր ընկուում կոթողային ճարտարապետությամբ, որպես պարտադիր բաղադրիչ՝ ունեց «սուսի»-տաճար, «պալատական» տիպի կառուցմեր կամ հանդիսության սրահ, համալիրում մեծ տարածք էին զբաղեցնում պետական պահեստարանները և պետական արիեստանոցները, այստեղ էր գործում ուրարտական վարչակազմը և որպես կանոն՝ առօրյա գրագրության բոլոր օրինակները հայտնաբերվել են նաև կենտրոններից:

Բիայնիլի-Ուրարտուի՝ որպես պալատական/տաճարային տիպի պետության բնույթը բացառում էր երկրում քաղաքային այնպիսի բնակավայրերի գոյությունը, որոնցում կարող էր կենտրոնանալ մեծաթիվ բնակչություն, կարելի կիմեր խոսել քաղաքներին բնորոշ կառուցապատճան մասին, այս է՝ ամրությունների առկայություն և սահմանափակ տարածքով պայմանավորված՝ բնակարանների խիտ կառուցապատճան, տաճարների/սրբարանների գոյություն (հնչախիք վկայված են Յայաստամի ուշբրոնզ՝ – վաղերկարեդարյան բնակատեղներում) և բնակիչների՝ քաղաքային/հանայնական հնքնավարության և շուկայական հարաբերություններով պայմանավորված՝ քաղաքային կյանքին բնորոշ կենցաղակարության նասին, օրինակ՝ հրապարակի/շուկայի առկայություն կամ շուկայական/ազատ տնտեսական հարաբերությունների գոյության վկայություններ:

Փոխարենը՝ ուրարտական խոշոր կենտրոնների «քաղաքային թաղանասեր»-ը ունեցել են սահմանափակ տարածք, աչքի չեն ընկնում խիտ կառուցապատճանով, չուժեն հրապարակ/շուկա, տաճար(ներ)/սրբարան(ներ), բնակչությունը կամ առնվազն բնակչության զգալի մասը չի վարել սեփական տնտեսություն, իսկ ապրուստը հոգացել է պետություն՝ անողոցում կենտրոնացված պետական միջոցների վերաբաշխման ճանապարհով:

«Քաղաք»-ն էր համակարգում տվյալ գտուու տնտեսական կյանքը՝ միաժամանակ իրականացնելով պետության հիմնական գործառույթներից մեկը՝ պետական միջոցների կենտրոնացումն ու վերաբաշխումը: Դրանով պայմանավորված՝ ուրարտական քաղաքն ուներ սահմանափակ բնակչություն, որի թիվն ուղիղ համեմատական էր տվյալ կենտրոնի իրականացրած գործառույթների հետ, իսկ «բնակչություն»-ը ծառայում կամ սպասարկում էր «քաղաք»-ը²⁵:

²⁵ Տե՛ս և հմտ. նաև Biscione R. 2003, Pre-Urtanian and Urartian Settlement Patterns in the Caucasus, Two Case Studies: The Urmia Plain, Iran, and the Sevan Basin, Armenia, in: Smith A.T., Rubinsohn K.S. 2003 (eds.), Archaeology in the Borderlands. Investigations in Caucasia and Beyond, Cotsen Institute Monograph 47. Los Angeles, pp. 183-184. and n. 10; Smith A.T. 1998, Late Bronze/Early Iron Age Fortresses of the Ararat and Shirak Plains, Armenia: Typological Considerations, “Ancient Civilizations from Scythia to Siberia” 5/2, Leiden, p. 74, n. 3; նոյնիք՝ 2003, The Political Landscape. Constellations of Authority in Early Complex Polities. Berkeley – Los Angeles – London, pp. 241ff.

Ուրարտական «քաղաք»-ում բնակչության խտությունը՝ 1 հա-ի համար միջինը կազմում էր 7-8 տուն կամ 35-40 մարդ: Ըստ այդմ, Ուրսա Արգիշտիորու հիմնադրած «Թեյշերայի քաղաք»-ի համար (Կարմիր բլուր, մոտ 40 հա) կարելի է ենթադրել ոչ ավելի, քան 1.5 հազ. բնակիչ, այդ նույն թվաքանակն է ենթադրվում ուրարտական մեկ այլ խոշոր կենտրոնի՝ «Ուրսայի փոքր քաղաք»-ի համար (Բաստամ, մոտ 50 հա՝ ներառյալ կայազորը²⁶: Ոչ ավելի, քան 3-4 հազ. բնակիչ կարող էին ունենալ իրենց տարածքով ամենամեծ ուրարտական կենտրոնները՝ Տուշպան (80-90 հա), «Ուրսայի փոքր քաղաք»-ն (Այանց/Այանիս, մոտ 80 հա) և «Կազա Երկրի Արգիշտիսինիլի քաղաք»-ը (Արգիշտիսինիլի-Արմավիր՝ մոտ 100-120 հա): Չատ ավելի համեստ տարածք են ունեցել մյուս «քաղաքներ»-ը և ամրոցները. իսկ խոշոր կենտրոններից մի քանիսը՝ Սարդուրիշինիլին (Դայկարերո/Չավուշթեփի), «Ուրսայի փոքր քաղաք»-ն (Թոփրաք-քալե), «Չիուկունու Երկրի Խալդի քաղաք»-ը (Արծկե/Թեֆ Քալեսի) և Ալթընեկեն (ճմին) ընդհանրապես չեն ունեցել «արտաքին քաղաք»: Ըստ այդմ, չափազանցված պեսք է համարել Տուշպայի համար առաջարկված 50 հազ.²⁷, Արգիշտիսինիլիի և Կարմիր բլուրի բնակչության համար ենթադրվող համապատասխանարար 30 հազ.²⁸ և 20 հազ. թվերը²⁹: Ուրարտական որևէ կենտրոն ոչ իր տարածքով, ոչ իր բնակչությանը համարելի չէ միջագետքան քաղաքների հետ:

Ուրարտական շրջանում լեռնաշխարհում վկայված գյուղական բնակավայրերի տարածքը հիմնականում կազմում էր 0.1 – 5 հա և սակավ դեպքերում գերազանցում 5 հա-ը³⁰: Բնակավայրերի մեծ մասի տարածքը կազմում էր 1 հա-ին մոտ: Ի տարբերություն «քաղաքներ»-ի՝ ուրարտական շրջանի գյուղական բնակավայրերը թե՛ գրաղեցրած տարածքով և թե՛ բնակչության թվով միանգամայն համարելի են սիրիա-միջագետքան գյուղական և գյուղատիկ բնակավայրերին: Դրանց տարածքը սովորաբար կազմում էր մինչև 1 հա, հազվադեպ էր անցնում 5-6 հա-ը՝ ոչ ավելի, քան 120-150 մարդու հասնող բնակչությանք³¹:

²⁶ Kleiss W. 1980, Bastam, an Urartian Citadel Complex of the Seventh Century B.C., “American Journal of Archaeology”, Baltimore / Princeton, 84/3, p. 301.

²⁷ Burney Ch.A. 1972, Urartian Irrigation Works, “Anatolian Studies” 22, Baltimore / Princeton, p. 183; Tarhan M.T. 2011, Başkent Tushpa / The Capital City Tushpa, in: Körögülu K., Konyar E. 2011 (eds.), Urartu: Doğu’da Değişim / Urartu: Transformation in the East, İstanbul, s. 291.

²⁸ Мартиросян А.А. 1974, Аргиштихинили. Археологические памятники Армении 8. Урартские памятники I, Ереван, с. 137.

²⁹ Հովհաննիսյան Կ.Լ. 1996, Ուրարտական ճարտարապետություն, Տիրապետական գործակությունների մասին, հ. 1, Երևան, էջ 94:

³⁰ St'iu, ophéusak, Biscione 2003, նշվ. աշխ. էջ 171-173, Fig. 8.4.

³¹ Wiggermann F.A.M. 2000, Agriculture in the Northern Balikh Valley: The Case of Middle Assyrian Tell Sabi Abyad, in: Jas R.M. 2000 (ed.), Rainfall and Agriculture in Northern Mesopotamia, Proceedings of the Third MOS Symposium (Leiden 1999), “Publications de l’Institut historique-archéologique néerlandais de Stamboul” 88, Istanbul – Leiden, p. 193; Casana J. 2009, Alalakh and the Archaeological Landscape of Mukish: The Political Geography and Population of a Late Bronze Age Kingdom, “Bulletin of the American Schools of Oriental Research” 353, New Haven, p. 30, Tab. 3.

Առաջին գլխի հիմքերորդ բաժնում քննարկվում է Բիայնիլի-Ուրարտուում պաշտամունքային կառույցների և տաճարային ճարտարապետության առնչվող հարցեր: Առանձին անդրադարձ է արվում սեպագիր տեքստերում հիշատակվող և պաշտամունքային կառույցներ մատնանշող տերմիններին: Թեև դրանք բազմաթիվ են (^{NAA}*pulusi*, (GiŠ)KÁ(MES), (^E)*susi*, É, É.DINGIR^{MES}, É.BÁRA, *jarani*, (^E)*adunisi*, É*sir(i)hani* և այլն, սակայն, դրանցից միայն մեկն է, որը կարելի է հստակ բնութագրել իրու «տաճար»: Դա «սուլիսի»-ն է կամ «աշտարակ-տաճար»-ը³²:

Դիմնական խնդիրը, սակայն, կապված է «տաճար» հասկացության հետ: Կարծես, Բիայնիլի-Ուրարտուում ընդհանրապես «տաճար» հասկացությունը ընկապվել է իրու «խալիփի տաճար»³³: Որքան էլ տարօրինակ թվա, պետության պաշտոնական դիցարանի առաջնակարգ աստվածներին նվիրված տաճարների կամ ճարտարապետական կառույցների գոյության որևէ վկայություն գոնե առայժմ հայտնի չէ: Այդ երևույթի պատճառը կարող էր լինել երկրում իշխող հզոր «խալիպակենտրոն» գաղափարախոսությունը՝ կենտրոնացված արքայատան հովանավոր աստծոն պաշտամունքի շուրջը: Ըստ այդմ, կարելի է ենթադրել, որ այլ աստվածությունների պաշտամունքն ու ծեսերն իրականացվել են ոչ այլուր, քան խալիփի աստծոն տաճարում կամ նրա հետ կապված որևէ կառույցի առջև: Ինչպես ուրարտական տաճարային ճարտարապետության ակունքները, այնպես էլ՝ դիցարանի բնութագրական աստվածների պաշտամունքային կենտրոններն ընդհանրապես, ընկած էին լեռնաշխարհի հարավում³⁴:

Առաջին գլխի վեցերորդ բաժինը վերաբերում է Բիայնիլի-Ուրարտուում հաղորդակցության համակարգին: Ուրարտական սեպագիր աղբյուրներում պետության կողմից անցկացված ճանապարհների մասին առաջին տեղեկությունները հայտնի դարձան Վերջերս, երբ 2008 թ-ին իրատարակվեց Սավազքի, ապա և, արդեն 2010 թ-ին՝ Բուլութիրնարի արձանագրությունը: Դրանցից առաջինում խոսվում է Ուլսա Երիմնեայորդու կողմից ճանապարհ անցկացնելու մասին: Երկրորդ արձանագրությունը, որը բռնելի է Արգիշթի Ուոայորդին, հայտնում է Արածանի գետի վրա (ուրարտ. ¹arş̡i(j)an): Կամնուրջներ կառուցելու մասին, որոնք անվանվել են Արգիշթիի անունով (*terubi tini ¹argištinili qaburzanili*): Ապա տեքստը հայտնում է դեպի Բիայնիլի ճանապարհ (KASKAL, ուրարտ. *hari*) անցկացնելու մասին³⁵:

³² Salvini M. 1979a, Una ‘bilingue’ assiro-urartea, in: Carruba O. 1979 (ed.), *Studia Mediterranea Piero Meriggi dicata*, vol. I-II, Pavia, pp. 580ff.

³³ Պետրոսյան Ա. 2006, Հայոց ազգածագման հարցեր, Երևան, էջ 261.

³⁴ Grekyan Y.H. 2006, The Will of Menua and the Gods of Urartu, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 1, Yerevan, pp. 150-195; Batmaz A. 2009, Urartu Anıtsal Kaya Nişelerinin Olası Kaynakları, in: Sağlamtimur H. et al. 2009 (eds.), Altan Çilingiroğlu’na Armağan: Yukarı Denizin Kıyısında Urartu Krallığı’na Adanmış Bir Hayat / Studies in Honour of Altan Çilingiroğlu. A Life Dedicated to Urartu on the Shores of the Upper Sea, İstanbul, 2009, pp. 151-161; Çevik N. 2006-2007 [2008], The Gods and Temples, From the 2nd Millennium to the 1st Millennium B.C. A Comparative Study, “Anodos. Studies of the Ancient World” 6-7, pp. 135-136.

³⁵ Տե՛ս CTU I, A 14-2₂₇₋₃₀, ինչպես նաև A 14-1 Ro₂₉₋₃₁, CTU I, A 11-8₃₋₁₄ տեքստերը:

Քիայնական տերության ողջ կենսագործունեությունը հենվում էր հաղորդակցության զարգացած ցանցի վրա: ճանապարհները վերահսկվում էին պետության կողմից կառուցված ամրոցների միջոցով, իսկ դրանց միջև ընկած տարածքներում գործում էին ամրացված իշխանատուն-կայանները: Դրանք ունեին պահակազոր և սպասարկող անձնակազմ, ապահովված էին պարենամբերքով, փոխադրող տեխնիկայով, քաշող կենդանիներով և ձիերով: Յնազիտորեն փաստագրված իշխանատունների թիվը անցնում է երեք տասնյակը և վկայված են տերության գրեթե բոլոր հիմնական մայրուղիների վրա: Դրանք սովորաբար կառուցվել են «մեկօրյա ճանապարհ» հեռավորությամբ, ինչը կազմում է միջինը 25-30 կմ, իսկ հեռավորությունը կախված էր տեղանքից ու ճանապարհի բարդությունից: Այդ հեռավորությունը հավասար է 3 երս-ի («կրկնաժամ ճանապարհ») և հանդիպում է միջագետքյան՝ տարբեր դարաշրջանների տեքստերում և³⁶: Պետության կողմից կառուցված նամակ իշխանատունը հայտնի են Ասորեստանից: Դրանք կոչվել են *bīt mardītu*, իշխանատան պետի՝ LUGAL *kalli'-u*-ի տնօրինության ներքո³⁷: Ինչպես մենք ենք կարծում, ուրարտական տեքստերում բազմիցս վկայված և երեմն նաև արքայի անունով անվանակոչված *barzu/idi(b)i duni*-կառուցվածքը կարող էին լինել իշխանատներ: Այդ համակարգի հետ էր կապված լինելու նաև ուրարտական տեքստերից մեկում հանդիպող ^{LUGAL}KASKAL-ծառայությունը (բառացի՝ «ճանապարհի մարդ»)³⁸:

Քիայնական ճանապարհների ցանցն իր իշխանատներով հիշեցնում է ասորեստանյան «Արքայական ճանապարհ»-ը (KASKAL-LUGAL/*garrān šarrī*)³⁹: Աքենինյան հաղորդակցության համակարգը և նաև ավորապես՝ «Արքայական ճանապարհ»-ը⁴⁰, հավանաբար, փոխառված էր ասսուրա-ուրարտական օրինակից⁴¹: Յին Յայաստամի ճանապարհների մի մասը կրկնում էր ուրարտական շրջանի ճանապարհների երթուղին:

³⁶ Faist B. 2006, Itineraries and Travellers in the Middle Assyrian Period, “State Archives of Assyria Bulletin” 15, Helsinki, p. 148 and n. 4, 150.

³⁷ Levine L.D. 1989, K. 4675+ - The Zamua Itinerary, “State Archives of Assyria Bulletin” 3, Helsinki, p. 90.

³⁸ CTU IV, CT Kb-1 Ro₉.

³⁹ Kessler K. 1997, “Royal Roads” and other Questions of the Neo-Assyrian Communication System, in: Parpola S., Whiting R.M. 1997 (eds.), Assyria 1995, Proceedings of the 10th Anniversary Symposium of the Neo-Assyrian Text Corpus Project, Helsinki, September 7-11, 1995, Helsinki, pp. 129ff.

⁴⁰ St'u Briant P. 2002, From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, Winona Lake, Indiana, pp. 357ff.

⁴¹ Graf D.F. 1994, The Persian Royal Road System, in: Sancisi-Weerdenburg H., Kuhrt A., Cool Root M. 1994 (eds.), Achaemenid History VIII. Continuity and Change, Proceedings of the Last Achaemenid History Workshop, April 6-8, 1990, Ann Arbor, Michigan, Leiden, pp. 172-173; Belli O. 2001, Survey on Urartian Road Network in East Anatolia, in: Belli O. 2001d (ed.), İstanbul University's Contributions to Archaeology in Turkey (1932-2000), İstanbul, p. 374.

Գլուխ Բ ՈՎԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԲԻԱՅՆԻԼԻ-ՌԻՎԱՐՏՈՒՈՒՄ

Երկրորդ գլուխն ուսումնասիրում է Բիայնիլի-Ռիվարտուի ռազմական կազմակերպվածության ու բանակաշինությանը վերաբերող խնդիրները: Կազմված է չորս բաժիններից: Առաջին բաժնում ռազմարվեստի պատմության տեսամնյունից քննարկվում է Յայկական լեռնաշխարհի ուշբրոնզ – Վատերկաթետարյան շրջանի սեպագիր և հնագիտական նյութը: Ինչպես հին Առաջավոր Ասիայի, այնպես էլ՝ Յայկական լեռնաշխարհի ռազմարվեստի բնորոշ կողմն այդ շրջանում թերև-անվավոր մարտակառքերի լայն կիրառությունն էր ռազմական գործում (G.I.S.G.I.G.R./*narkabutum/nūbalum*): Որոնք փոխարինելու եկան մարտական ժամը սայյերին (G.I.S.M.A.R.G.I.D.DA/*eriqqum*): Քննարկվում է ռազմարվեստ դրանց մուտք գործելու ժամանակաշրջանը, ռազմական գործում ծիերի կիրառությանը վերաբերող առաջին վկայությունները: Զիաքարշ թերև մարտակառքերի լայն կիրառությունը ռազմական գործում հաճեցնում է արմատական փոփոխությունների, իսկ հետևակի՝ որպես հիմնական գորատեսակի դերն առժամանակ նովում է հետախորը⁴²:

Առանձին անդրադարձ է արվում Յայկական լեռնաշխարհի ռազմական պատմությանը վերաբերող գրավոր և հնագիտական նյութի ուսումնասիրությանը: Գրավոր աղբյուրներից հայտնի են դառնում նոր վկայություններ միջնասորեստանյան բանակի կազմում ընդգրկված նախրյան և շուբրիական գորքերի մասին⁴³: Բուն լեռնաշխարհում նկատվում է հասարակության կտրուկ ռազմականացում⁴⁴, ի հայտ են գալիս առաջնորդների և ռազմիկների թաղումներ, նկատվում է հատկապես գենքով հարուստ թաղումների աճ, ինչը խոսում է ռազմիկների խավի ձևավորման մասին⁴⁵: Այդ փուլի բնութագրական կողմերից մեկը հասարակության կտրուկ շերտավորումն էր՝ հասարակությանը կազմակերպելու և ուղղորդելու ունակ իշխող վերնախավով⁴⁶: Յնագիտական իրավիճակը համադրելի է գրավոր

⁴² Drews R. 1993. The End of the Bronze Age: Changes in Warfare and the Catastrophe ca. 1200 BC. Princeton N.J., pp. 138, 142ff.

⁴³ Postgate J.N. 2008. The Organization of the Middle Assyrian Army: Some Fresh Evidence, in: Abrahams Ph, Battini L. 2008 (eds.), Les armées du Proche-Orient ancien (IIIe-Ier mill. av. J.-C.), Oxford, pp. 86-88.

⁴⁴ Ավետիսյան Պ. 2014, Հայկական լեռնաշխարհ մ.թ.ա. XXI-IX դարերում (սոցիալ-ճշգրիտային ձևափոխումների դիմանմկան ըստ հնագիտական տվյալների), Գիտական գելուցում, Երևան, էջ 65-66:

⁴⁵ Եսայան Ս.Ս. 1965, Հայաստանի ցեղերի սպառազինության ու ռազմական կազմակերպության հարցերի շորջը (Աևանի Ավազանի նյութերի հիման վրա), «Պատմաբանական հանդես» 1, էջ 283; Gevorgyan A. 2009, Reflections on Metal Production in Armenia during the Late Bronze and Early Iron Ages, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 4/2, Yerevan, p. 36ff.

⁴⁶ Badalyan R.S., Smith A.T., Avetisyan P.S. 2003, The Emergence of Sociopolitical complexity in Southern Caucasia: An Interim report on the Research of Project ArAGATS, in: Smith A.T., Rubinson K.S. 2003 (eds.), Archaeology in the Borderlands. Investigations in Caucasia and Beyond, Cotsen Institute Monograph 47. Los Angeles, pp. 144ff.; Badalyan R.S., Smith A.T., Khatchadourian L. 2010, Project ArAGATS: 10 Years of Investigations

աղբյուրների տեղեկություններին՝ Հայկական լեռնաշխարհում ծևավորված տարրեր «Երկրներ»-ի և դրանց միությունների մասին: Այդ «Երկրներ»-ի ռազմական կազմակերպվածության մասին գրավոր տեղեկությունների և պատկերագրական աղբյուրների հիմնական մասը վերաբերում է ասորեստանյան արքա Սալմանասար III-ի կողմից թ.ա. 856 թ-ին «Արամու ուրարտացու» դեմ ձեռնարկված արշավանքին:

Երկողորդ գլխի երկրորդ բաժինը («Բանակաշինությունը Բիայնիի-Ուրարտուում թ.ա. 9-րդ դ-ում») վերաբերում է բիայնական/հւրարտական արհեստավարժ բանակի կազմակորմանը: Դա տեղի ունեցավ Իշպուհիի և Մենուայի կողմից հրականացված քաղաքական և ռազմական բարեփոխումների ընթացքում⁴⁷: Արիեստավարժ բանակի ծևավորման մասին է վկայում այն փաստը, որ այդ շրջանից սկսած սեպագիր տեքստերում կիրառությունից դուրս է մղվում զինված ուժերն արտահայտող ^{լւ}KUR.KUR^{MES}, «Երկներ(ի մարդկի), աշխարհազոր» գաղափարագիրը: Փոխաբենը, սեպագիր դրանությունը սկսում է օգտագործել ^{լւ}*huradi(e)* տերմինը (գաղափարագիր ^{լւ}A.SI^(MES))⁴⁸:

^{լւ}*huradi(e)* տերմինը հանդիպում է աքքաբերենում որպես գորքի տեսակ և փոխառություն եր խորհերենից (հնմտ. խուռ. *huradi* «խուռի (ռազմիկ)», «զինվոր»): Երևայի տեքստերում այն վերաբերում էր արհեստավարժ զինվորականությանը, որը մատակարարվում և պահպում էր պետության կողմից⁴⁹: Այդ տերմինով էն նշվում ընտրյալ գործերը Սիտաննիում: Միջինասորեստանյան ռազմական կառուցք նեծապես կրում էր միտաննական ազդեցությունը⁵⁰, իսկ *hurādu*-զինվորականությունը կազմել է միջինասորեստանյան բանակի կարևոր օլակներից նեկը⁵¹: ^{լւ}*huradi(e)* տերմինի ընտրությունը պայմանավորված էր նաև դրա

into Bronze and Iron Age Sites in the Tsaghkahovit Plain, Republic of Armenia, “Türkiye Bilimler Akademisi Arkeoloji Dergisi” 13, Ankara, pp. 267ff; Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ա. 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Երևան, էջ 8-13; Ավետիսյան 2014, նշվ. աշխ., էջ 63-66; Smith 2003, նշվ. աշխ., էջ 166; Biscione R. 2009, The Distribution of Pre- and Protohistoric Hillforts in Iran, “Studi Micenei ed Egeo-Anatolici” 51, Roma, pp. 134-135; և այլն:

⁴⁷ Հնայալյան Ա.Գ. 1988, Իշպուհներ և Սինուս արքաների ռազմական բարեփոխումների շորջ, «Ազգ - պետություն - բանակ», Երևան, էջ 72-77; Հնայալյան Ա.Գ. 1994, Իշպուհներ և Սինուս արքաների բարեփոխումների ծրագիրն ու բիայնական պետության և մշակույթի գոյացումը, Հայաստանի Հանրապետությունում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արյունքներին նվիրված գիտական նախշըջան՝ նվիրված Գ.Ա. Տիրացյանի հիշատակին, Երևան, էջ 19:

⁴⁸ ԿԿՀ, ս. 447; ԾՒ II: 102f.

⁴⁹ Freydark H. 1976, Untersuchungen zur sozialen Struktur in Mittelassyrischer Zeit, „Altorientalische Forschungen“ 4, Berlin, S. 111sqq.; Heltzer M. 1979, Some Problems of the Military Organization of Ugarit (Ugaritic *hrd* and Middle-Assyrian *hurādu*), “Oriens Antiquus” 18, Roma, pp. 245ff.; Vita J.-P. 2002, Warfare and the Army at Emar, „Altorientalische Forschungen“ 29/1, Roma, p. 124.

⁵⁰ Stillman N., Talis N. 1984, Armies of the Ancient Near East 3,000 BC to 539 BC, Worthing, p. 27; Jacob S. 2003, Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, “Cuneiform Monographs” 29, Leiden – Boston, S. 191sqq.

⁵¹ Jacob 2003, նշվ. աշխ., S. 202sqq.

սոցիալական բովանդակությամբ. ինչպես մենք ենք կարծում, ինու այդ տերմինն էր արտահայտում ծառայող և ծառայության իրավունքով պետական հողատարածքների տիրող գինվորականությանը:

Բիայնիլի-Ուրարտուում ռազմական բարեփոխումները եղել են շարունակական գործընթաց և հաջորդ Վկայությունները վերաբերում են Սարդուրի Արգիշտորդու և Ռուսա Սարդուրորդու հշխանության տարիներին արված քայլերին, որոնք լուսաբանվում են երկրորդ գլխի երրորդ բաժնում: Բանակաշինության գործում արմատական քայլեր իրականացրեց հատկապես Ռուսա Սարդուրորդին: Ըստ երևույթին նրա քայլերը այս կամ այն կերպ կրկնել են ասորեստանյան արքա Թիգլարպալասար՝ III-ի իրականացրած ռազմական բարեփոխումները: Ռուսա Սարդուրորդու օրոք բանակն ամբողջությամբ վերակազմավորվեց ասորեստանյան օրինակով:

Բանակը բաղկացած էր երկու հիմնական մասից՝ «արքայական գնդից» և «մարզային գործերից»: Ինչպես Ասորեստանում, Ուրարտուում ևս բանակի միջուկը դարձավ նոր կազմավորված «արքայական գումդ»-ը (աքքան՝ *kışır sarruti*): Ուրարտական բանակի «արքայական գնդի» հիշատակությունների կարելի է հանդիպել ինչպես ասորեստանյամ⁵², այնպես էլ՝ ուրարտական աղբյուրներում⁵³: «Ալքայական գումդ»-ը գերազանցապես կազմված էր հեծելազորից և մարտակառքերից, որտեղ ծառայում էին բիայնական իշխող՝ ⁵⁴*mari(ni)* խավի անդամները:

Ռուսա Սարդուրորդու օրոք ձևավորվում են նաև մարզային գնդերը: Դրանք ողջ տարին պահվում էին գենքի տակ, գինվորների ապրուստը հոգուն էր պետություննը, պետությունն էր ապահովում նաև գենքը: Ռուսա Սարդուրորդուց սկսած բանակի գորագնդերի մեջ մասը ներկայացնում էին մարզային գործերը:

Մշտական բանակի մյուս հատվածը կազմում էին կայազորային գործերը: Յենվելով իինարևեսան տարբեր աղբյուրների վկայությունների վրա և հաշվի առնելով ուրարտական խոշոր կենտրոններում բացված գորանցների զբաղեցրած տարածքն ու պետական պահոցների հնարավորությունները՝ յուրաքանչյուր մեծ և միջին մեծության անրոցի կայազորի համար կարելի է ենթադրել հարյուրից երեք հարյուր գինվոր և յուրաքանչյուր փոքր ամրոց-ամրության համար՝ ոչ ավելի, քան հիսուն գինվոր: Զաշվի առնելով հնագիտորեն վկայված ուրարտական ամրոցների ընդհանուր քանակը՝ բերդապահ գործի թիվը թ.ա. 8-րդ դ-րմ մենք ենթադրում ենք 10-12 հազ. գինվորի սահմաններում և կարող էր հասնել 12-15 հազ-ի՝ թ.ա. 7-րդ դ-րմ:

Բիայնիլի-Ուրարտուում մշտական բանակի թիվը կարելի է հաշվել 20-25 հազ. մարդու սահմաններում, որի մոտ կեսը կազմելու էին կայազորային գործերը: Բիայնական սեպագիր աղբյուրները վկայում են գենքի կանչված ընդհույս մինչև 30 հազ. ռազմիկների մասին, որի գործեր կեսը կազմում էր հեծելազորը:

⁵² Mayer W. 1983, Sargons Feldzug gegen Urartu-714 v.Chr.: Text und Übersetzung, „Mitteilungen der Deutschen Orient- Gesellschaft“ 115, Berlin, S. 84, 86 (Z. 171, 191).

⁵³ CTU IV, CT Çav-1 Ro 6.

Երկրորդ գլխի երրորդ բաժնում մանրանասն քննարկվում են նաև բանակի հրամանատարական կազմին, զորահավաքներին, զորատեսակներին, ռազմական հանդերձամբին և զինվածությանը վերաբերող գրավոր և հնագիտական տվյալները: Առանձին քննարկվում է բանակի եթիկ կազմը, բանակում ընդգրկված ենթակա երկրների զորքերին վերաբերող աղբյուրագիտական փաստերը, բանակում վարձկան ուժերի գոյության հնարավորությունն ու դաշնակից զորքերին վերաբերող տեղեկությունները: Ենթադրվում է, որ պետությունը դիմել է միայն մասնակի զորահավաքների, քանի որ իշխանությունները խնդիր ունեն վերահսկողության տակ պահելու նաև երկրի՝ հարյուր հազարների հասնող կախյալ բնակչությանը: Կան հիմքեր պնդելու, որ մարդկային ուժի պակասը լրացնելու հանար իշխանությունները ստիպված են եղել զորակոչել հողին ամրացված կախյալներին, ինչն աստիճանաբար փոխել է բանակի եթիկ պատկերը: Առաջին անգամ քննարկվում են զինվորների սննդակաղօին, բանակի սպասարկող կամ քաղաքացիական անձնակազմին վերաբերող առկա տվյալները և ռազմական կազմակերպվածությանն առնչվող այլ հացեր:

Չորրորդ բաժինը վերաբերում է Բիայնիլի-Ուրարտուում իրականացված ամրոցների և ռազմական այլ կառույցների շինարարությանը: Մեզ են հասել ամրոցների (Է.GAL) կառուցման մասին հայտնող ավելի քան 55 արձանագրություն՝ սկսած հշպուիմի Սարդուրորդուց մինչև Ռուսա Արգիշտրորի: Տեքստերի մեծամասնությունը կազմվել է Մենուայի ժամանակ (35 հիշատակություն): Ընդհանուր առնանք՝ հնագիտորեն վկայված ուրարտական ամրոցների թիվը հասնում է մոտ 300-ի: Դրանցից 13-ը ռազմավարչական խոչը կենտրոններ են կամ «քաղաքներ», որոնք հիշատակվում են անվանապես, 27-ը՝ բերդամրոցներ են, մնացյալ 254-ը տարբեր մեծության և հզորության ամրոցանություններ են և ամրացված իշխանատներ: Ի լրումն՝ փարատված չեն մոտ 30 ամրոցի ուրարտական պատկանելության հարցը: Անվանապես հիշատակվող ամրոցներից ոչ բոլորն են հնարավոր հնագիտորեն նույնականացնել, առավել ևս, ոչ բոլոր ամրոցներն են, որ աղբյուրներում հիշատակվում են որպես այդպիսին: Օրինակ, Բաստամը՝ ուրարտական ամենախոշոր ամրոցը, հանդես է գալիս որպես տաճար կամ տաճարային համայիր (Է.Բ.ԱՐԱ) կուլով «Ռուսայի փոքր քաղաք» անունը (³⁴*rusai URU.TUR*)⁵⁴: Հնագիտորեն վկայված ամրոցների քարտեզագրումը հնարավորություն է տալիս ոչ միայն ուրվագծելու բիայնական/ուրարտական իշխանության տակ գտնվող տարածքները, այլև՝ վեր է համում առանձին ամրաշղթաներ և ամրացված գտիմեր, որոնք պետության համար ունեն ռազմավարական նշանակություն: Նման ամրացված գտիմերի թիվը հասնում է տասնչորսի: Իրենց ամրացվածությամբ աշքի էին ընկնում պետության երկու՝ արևմտյան և հարավ-արևելյան «թևեր»-ին կառուցված ամրաշղթաները, ինչպես նաև պետության միջնաշխարհը և մայրաքաղաք Տուշպան պաշտպանող ամրությունների շղբան:

⁵⁴ ԿԿՀ, 419₁₋₇; ԾՏ 1, A 12-7₁₋₇.

Քիայնական/ուրարտական բանակն իր ռազմական կազմակերպվածությամբ չէր զիջում իին առաջավորասիական այլ երկրների զինվածությանը, որոշ առումներով անգամ գերազանցում էր նրանց, ինչի շնորհիվ ի զորու գտնվեց ապահովելու քիայնական պետության գոեթե կեստարյագերիշխանությունը իին Առաջավոր Ասիայում:

Գլուխ 4 ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Երրորդ գլուխը բաժանվում է երեք բաժինների: Առաջին բաժնում ներկայացվում է Յայկական լեռնաշխարհի աշխարհագրական և բնակլիմայական միջավայրը, ջրագործությունը, անտառները, մետաղահանքերը և դրանց վաղ շահագործման մասին հնագիտական և գրավոր աղբյուրների վկայությունները: Սանրամասն ներկայացվում է Քիայնիլի-Ուրարտուի տնտեսական տարածքի ընդհանուր բնութագիրը: Ի տարբերություն ուշրոնզ՝ վաղերկարենարյան դրաշշրջանի՝ ուրարտական իշխանությունները չեն փորձել հիմնավորվել ծ.մ. միջինը 2000 մ և ավելի բարձր ընկած նախալեռնային և լեռնային գոտիներում⁵⁵: Պետության կենսագործությունները, ակնհայտորեն, կենտրոնացված են լեռնաշխարհի ցածրադիր և գերազանցապես՝ հարթավայրային հատվածներում: Այդ առունով կարելի է նշել, որ Քիայնիլի-Ուրարտուն հարթավայրային քաղաքակրթություն էր:

Ուրարտական պետական տնտեսական տարածքն ըստ երթյան նույնանում էր կենտրոնական իշխանությունների անմիջական վերահսկողության տակ գտնվող հարթավայրային/երկրագործական տարածքներին կամ «հովհաններ»-ին, իսկ մեկ կամ մի քանի նման «հովհաններ» կազմում էին վարչատնտեսական միավոր կամ «նարզ»: Նման միավորն ասորեստանյան աղբյուրներում հանդես է գալիս որպես *nagid*: Այդ տերմինը նշանակում է «(բարեբեր) հովհան», «հարթավայր», «երկրագործական շրջան», պետության երկարագործական և բնակչության կենտրոնացման հիմնական տարածք»⁵⁶, որն ուներ ռազմավարչական/տնտեսական կենտրոն և ամրոց/ամրություններ՝ որանք շրջապատող երկրագործական տարածքով և գյուղատիպ բնակավայրերով: Այդ առունով այն հիշեցնում խեթական *haqqiriyā-hամակարգը*⁵⁷: Յելլենիստական Յայաստանում դրա զուգահեռ, թերևս, մայրաքաղաք Արտաշատի շուրջը սփռված նրա տնտեսական տարածքն էր կամ *χώρα-մ*⁵⁸:

⁵⁵ Հայաստանի տարածքում ընկած նախառարտական և ուրարտական ամրոցների գտնվածների համար տես Smith 2003, նշվ. աշխ., pp. 173ff.

⁵⁶ Zimansky P.E. 1990, Urartian Geography and Sargon's Eighth Campaign, "Journal of Near-Eastern Studies" 49/1, Chicago, pp. 10ff.; Գրեյյան Ե.Հ. 2002, Երկրագործական տարածքներն ու ռողման համակարգը հյուսիս-արևմտյան Իրանում ըստ սեպագիր աղբյուրների, «Պատմա-քանակաբական հանդես» 2 (160), Երևան, էջ 215-217:

⁵⁷ Beckman G. 1999, The City and the Country in Hatti, in: Klengel H., Renger J. 1999 (Hrsg.), Landwirtschaft im Alten Orient. Ausgewählte Vorträge der XLI. Rencontre Assyriologique Internationale, „Berliner Beiträge zur vorderen Orient“ 18, Berlin, p. 168.

⁵⁸ Քոչարյան Գ. 1998, Ուստան Հայոց գավառը Արտաշատի մերձաղբարյային տնտեսական տարածք, «Լրաբեր հասարակական գիտությունների» 2 (598), Երևան, էջ 172-176:

Ուրարտական կենտրոնական իշխանությունների վերահսկողության տակ գտնվող տնտեսական տարածքը չէր նույնանում տերության քաղաքական վերահսկողության տակ գտնվող տարածքի կամ այլ կերպ ասած՝ նրա սահմանների հետ: Ուրարտուի տնտեսական տարածքը, ակնհայտորեն, առավել համեստ էր, կազմված էր մի քանի տասնյակ «հովիտներ»-ց, որոնց կարելի է համեստ այն գոտիները, որը առկա էին բնական պաշարներ կամ ապահովում էին մուտք դեպի այր պաշարները: Կարմիր բլուրի երկրագործական գոտին, օրինակ, կարող էր կազմել ոչ պակաս, քան 60-70 կմ², ինչը գորեք հավասար է Կարմիր բլուրի գոտու շրջագիծն մոտ 5 կմ շառավղով: Արգիշթիհոնիլիի երկրագործական գոտին կառող էր ընդորկել 120-150 կմ², որը հաճապատասխանում է Վանա լճի արևելյան ավազանի այն հովիտների տարածքին, որոնցում հիմնվել են խոշոր բերդաքաղաքներ, ինչպես, օրինակ, Տուշպան էր, որի երկրագործական գոտին զբաղեցնում է մոտ 150 կմ², Դայկարերդը, որը 190 կմ² զբաղեցնող երկրագործական գոտու կենտրոնն էր, Բաղմոցը՝ իր 110 կմ² երկրագործական գոտինվ ևն:

Երրորդ գլխի երկրորդ բաժինը վերաբերում է տնտեսության հիմնական ճյուղերին: Ուրարտական սեպագիր աղբյուրներն իրենց կաղապարայնությամբ հանդերձ բավական խոսում են, երբ տեղեկություններ են հաղորդում կենտրոնական իշխանությունների հրականացրած տնտեսական միջոցառումների և հատկապես՝ լյաճածաված ջրանցքաշինության և խոպան հողերի յուրացման մասին: Կենտրոնացված մատակարարումների համակարգ կիրառող պետության համար երկրագործությունն ուներ կենսական նշանակություն: Երկրագործությունն էր, ըստ եւրյան, պայմանավորում բիհյանական պետության գոյությունը:

Ք.ա. 2-րդ հազ-ի վերջերին Դայկական լեռնաշխարիի գրեթե ողջ տարածքում և մասնավորապես՝ Վանա լճի ավազանում, ընդհուպ մինչև ուրարտական դարաշրջան տիրապետող էր անասնապահական կենցաղավարությունը, իսկ երկրագործությունն ուներ երկրորդական նշանակություն⁵⁹: Ուրարտական շրջանում պատկերը ճշշտ հակառակն էր: Պետության տնտեսության հիմքը երկրագործությունն էր, հատկապես՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունը⁶⁰: Հացահատիկն ուներ

⁵⁹ Burney Ch.A. 1957, Urartian Fortresses and Towns in the Van Region, “Anatolian Studies” 7, London, p. 37; Taffet A., Yakar J. 1998, Politics and Religion in Urartu, in: Prince Takahito Mikasa 1998 (ed.), Essay on Ancient Anatolia in the Second Millennium B.C., “Bulletin of the Culture Center in Japan” 10, Wiesbaden, p. 135 and n. 4-5; Yakar J. 2011, Ethnoarcheologik Veriler Işığında Doğu Anadolu’nun Urartu Döneminde Sosyo-Ekonominik Yapısı / The Ethnoarchaeology of the Socio-Economic Structure of East Anatolia in the Urartian Period, in: Körroğlu K., Konyar E. 2011 (eds.), Urartu: Doğu’da Değişim / Urartu: Transformation in the East, İstanbul, pp. 125ff.

⁶⁰ Բիհյանի-Ուրարտուս երկրագործության համար տես Մելիկշվիլ Գ.Ա. 1954, Древневосточные материалы по истории народов Закавказья I. Наири-Урарту, Тбилиси, с. 327 сл.; Пиотровский Б.Б. 1959, Ванское царство (Урарту), Москва, с. 133 сл.; Арутюняն Н.В. 1964, Земледелие и скотоводство Урарту, Ереван, с. 53 сл.; ինչպես նաև Zimansky P.E. 1998, Ancient Ararat: A Handbook of Urartian Studies, Delmar, New York, pp. 79-81-ում արված գրականությունը:

Ժիսապաշտամունքային մեծ նշանակություն և բիայնացիների գերագույն՝ Խալդի աստվածը, նաև հացահատիկի աստվածություն էր: Ավելորդ չեն նշել ուղարտական տոմարի՝ տիափի երկրագործական բնույթը⁶¹:

Տնտեսության մեջ անասնապահությունը, իհարկե, երկրորդական չեր, բայց, այնուամենայնիվ, չուներ այն կենսական նշանակությունը, որը հատկացվում էր երկրագործությանը: Ի տարբերություն, օրինակ, «անայի վայրեր»-ում այսմերի, խարորտաներ և հացահատիկի ցանքսեր գցելու մասին արձանագրությունների մեծարիվ հիշատակումների՝ ընդամենը երկու տեքստ է մեզ հայտնում արքայի կողմից «գոն» (՝) կամ «փարախ» (ուրարտ. *si/eršini*) կառուցելու մասին⁶², ըստ որում, դրանք նախատեսված էին զիհարերվելիք կենդամներին պահելու համար և չուժին տնտեսական նշանակությունը⁶³: Ընդունելի չեն նաև այն տեսակետը, ըստ որի՝ ուրարտական իշխանության շրջանում բնակչության հիմնական մասն ապրել է կիսաքոչվոր կենցաղավարությանը և սեղոնային տեղաշարժերով պայմանավորված եղել իշխան շարժումակ՝ քարձրանալով ամառային արոտավայրերը և ձմեռելով հարթավայրերում⁶⁴: Ստորև ներկայացվելիք պատկերը՝ Բիայնիլի-Ուրարտուում հողատիրության բնույթի և հիմնական արտադրող ուժի՝ հողին ամրացված կախյալների խավի մասին, բացառում է նման հնարավիրությունը:

Մյուս կողմից, բիայնացիների ծեռնարկած արշավանքների գլխավոր նպատակներից մեկը դա կենդանի հոտերի բալանն էր: Ավարառված անասնագլխաքանակը լրացնելու էր այն հնարավոր բացը, որը պետությունը կարող էր զգալ՝ անասնապահության համար հարթավայրային գոտիների ընծեռած համեմատաբար սահմանափակ հնարավորությունների պատճառով: Մեզ հասած տեքստերում Բիայնիլի քշկած անասունների թիվը հասնում է հսկայական չափերի՝ մոտ 300 հազ. գլուխ խոշոր, 1 մլն-ից ավելի մանր եղջերավոր անասուն: Ավարից բացի մեկ այլ առյուր էր հապատակ ժողովուրդներից գանձվող հարկերը, որը ստացվել է հիմնականուն ընտանի կենդամներով:

Ուրարտական որոշ տեքստեր վկայում են երկրագործական տարածքներում կամ «պետական հատված»-ում պահվող ոչխարների հոտերի մասին, որոնք, ասորեստանյան զուգահեռներից դատելով, պահպան էին զիհարերությունների նպատակով կամ հատուկ արքայական սեղանի համար: Դրանք նշվում են UDU.ŞE գաղափարագրով, որը կարելի է բարգանել որպես «հացահատիկով կերակրված ոչխառ»⁶⁵: ի տարբերություն խոտով կերակրված ոչխարների (շում. սdu.ս): Տվյալներ

⁶¹ Հնայակյան Ս.Գ. 1990, Վանի բացափորտթյան պետական կրոնը, Երևան, էջ 76-78; Taffet A. 1999, A Tentative Reconstruction of the Urartian Calendar of Festivals, “Anadolu Araştırmaları” 15, İstanbul, pp. 369f., 375ff.; Բաղալյան Ս. 2009, Տարին և Ուրարտուի դիցարանի գերազուն եռյակը, «Անդապար Արևելք» VI, էջ 36-42:

⁶² ԿՎԿԻ, 80_{2,4}, 81₄; CTU I, A 5-68_{2,4}, A 5-69.

⁶³ Salvini M. 1986, Tušpa, die Hauptstadt von Urartu, in: Haas V. 1986 (Hrsg.), Das Reich Urartu: Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v.Chr., „Xenia“ 17, Konstanz, S. 36sq.

⁶⁴ Wilkinson T.J. 2003, Archaeological Landscapes of the Near East, Tucson, pp. 197f., 204.

⁶⁵ Gelb I.J. 1965, The Ancient Mesopotamian Ration System, “Journal of Near-Eastern Studies” 24/3, Chicago, p. 237.

կան նշելու նաև «պետական հատված»-ում պահպող բրդատու ոչխարների մասին (շում. սdu.sig₂, ուրարտ. UDU erašini⁽⁷⁾):

Բիայնիլ-Ուրարտուի ծնունդն իրու Երկրագործության վրա հիմնված էին առաջավորասիական տիպի պետություն անհրաժեշտ դարձեց ամբողջությամբ Վերածելու լանդշաֆտը հատկապես բերդի հողեր ունեցող, սակայն, անջրոի հովտային շրջաններում: Արեստական ոռոգման վրա հիմնված Երկրագործությամբ պետության համար հիդրոշինարարությունն ուներ կենսական նշանակություն: Սեպագիր և հնագիտական աղբյուրները վկայում են Բիայնիլ-Ուրարտուում ոռոգման բարդ համակարգերի գոյության մասին⁶⁶: Ուրարտական վիճագրությունից հայտնի է ջրանցքաշինության մասին տեղեկություններ պահպանած 30 արձանագրություն: Տեքստերի ճնշող մեծամասնությունը (21 տեքստ) պատկանում է Մենուա Իշպուհնորդուն, որոնցից 14-ը վերաբերում են «Մենուայի ջրանցք»-ին: Այստեղ նշենք, որ վերջինս Երկարությունն իրականում չի գերազանցում 56 կմ-ը և նյայրաքաղաք Տուշպա Էր հասցնում տարեկան մոտ 40-45 մլն մ³ ջուր⁶⁷: Շուրջ 50 կմ է կազմել Արարատյան դաշտավայրում անցկացված ջրանցքների ընդհանուր Երկարությունը: Ուստա Արգիշտիրոդու օրոր Շարուր-Նախշիշանում անցկացվում է իր Երկարությամբ երրորդ ջրանցքը՝ Ֆերհար-քանալը (Ֆերհար 2)՝ շուրջ 25-30 կմ Երկարությամբ⁶⁸ և այլն:

Երեք արձանագրություն հայտնում են նաև ջրամբար կառուցելու մասին: Ընդհանուր առմանը, 2010 թ. դրությամբ, ուրարտական շրջանից մեզ են հասել հնագիտորեն վկայված ավելի քան 110 ջրամբարների հետքեր, որոնց մոտ 13 տոկոսը հետագա վերակառուցումների շնորհիվ գործում է մինչև օրս: Այդ ջրամբարներից թեշիշ-գյոլը գրանցնում է ավելի քան 7 կմ² տարածք և կարող է ամբարել մինչև 40 մ³ ջուր⁶⁹: Ամենախոշորը Մեյրան Բողազի ջրանբարն է՝ ավելի քան 9 կմ²

⁶⁶ Առկա է խնդրին վերաբերող ընդարձակ գրականություն: Տե՛ս Շիրմազան Գ.ր. 1962, ‘Երվանդն Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, էջ 5-61; Արյունյան 1964, Աշվ. աշխ., ս. 11 ևլ.; Laessoe J. 1951, The Irrigation System at Ulhu, “Journal of Cuneiform Studies” 5, New Haven, pp. 21ff; Özgün B. 1970, Van’da Urartu Sulama Tesisleri ve Şamram (Semiramis) Kanalı, Ankara; Burney Ch.A. 1972, Urartian Irrigation Works, “Anatolian Studies” 22, London, pp. 179ff; Belli O. 1996, Doğu Anadolu Bölgesi’nde Kesfedilen Urartu Barajlarina Toplu Bir Bakış, “Belleten” 60/229, 638ff; Garbrecht G. 1988, Water Management for Irrigation in Antiquity (Urartu 850 to 600 BC), “Irrigation and Drainage Systems” 2/2, pp. 185ff; Ծովական 2004, Historische Wasserbauten in Ostanatolien – Königreich Urartu, 9.-7. Jh. v.Chr., in: Ohlig C. 2004 (Hrsg.), Wasserbauten im Königreich Urartu und weitere Beiträge zur Hydrotechnik in der Antike (= Schriften der Deutschen Wasserhistorischen Gesellschaft (DWhG) e. Bd. 5., Siegburg, S. 1-103; և այլն:

⁶⁷ Garbrecht 2004, Աշվ. աշխ., S. 17, 21ff., Abb. 10.

⁶⁸ Այլազյան Ա. 1976, Արք և Շահնիկ բերդերը, «Լրաբեր հասարակական գիտուրյուններ» 9 (405), Երևան, էջ 91; Belli O., Sevin V. 1999, Nahçıvan’da Arkeolojik Araştırmalar 1998 / Archaeological Survey in Nakhichevan, 1998. İstanbul, s. 27ff.

⁶⁹ Belli O. 1999b, Dams, Reservoirs and Irrigation Channels of the Van Plain in the Period of the Urartian Kingdom, in: Çilingiroğlu A., Matthews R.J. 1999 (eds.), Anatolian Iron Ages 4. Proceedings of the Forth Anatolian Iron Ages Colloquium held at Mersin, 19-23 May 1997, “Anatolian Studies” 49, London, pp. 22-3, Figs. 14-15.

մակերեսով⁷⁰: Զրամբարներից առավել երկար ամբարտակն ուներ Մեմեղիքի ջրամբարը (գրեթե 1 կմ), իսկ Քյոշերաշը ջրամբարն ուներ առավել հաստարեսատ ամբարտակը՝ 31.5 մ լայնությամբ⁷¹: Ըստ այդ, այն պմունմները, թե թիայնական տիրապետությունն ի զրորու չի գտնվել ծևափոխելու լանշաֆտը և այն հարմարեցնելու կենտրոնացված պետության պահանջներին, բացարձակապես տեղին չեն: Ընդունելի չէ նաև այն կարծիքը, ըստ որի՝ Բիայմիլի-Ուրարտունմ ջրանցքաշինությունը միտված էր հիմնականուն անասնապահության կարիքները բավարարելուն, ինչի վրա շնչուադրուն են հատկապես Թուլքիայի հետազոտողները⁷²:

Երրորդ գլխի երրորդ բաժինը Վերաբերում է ուրարտական պետական կամ տաճարային/պալատական տնտեսությանը:

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ Բիայմիլի-Ուրարտուն ուներ Վերաբաշխման վրա հիմնված գերկենտրոնացված տնտեսություն: Այն կարելի է անվանել «էտափիզմ»⁷³ և ենթադրում էր տնտեսական փակ ցիկ՝ սկսած Ծյուբական միջոցների արտադրությունից մինչև պահեստավորում և Վերաբաշխուն: Վերաբաշխման վրա հիմնված տնտեսության կազմակերպիչը տաճարը/պալատն էր⁷⁴: Քազմաֆունկցիոնալ այդ կառուցյն էր համակարգուն երկրի տնտեսական կյանքը՝ երկրագործական և արհեստագործական աշխատանքները, անասնապահությունը, արտաքին առևտուրը, պետական պահոցների ու պաշարների համալրումը, հաշվառումը և դրանց բաշխումը տվյալ տնտեսական գոտում պետության հետ կապված քրնական, վարչական, ռազմական, արհեստագործական և ընդհանրապես՝ սպասարկող ու ծառայող խավերին:

Պետական մատակարարումների հաշվին պահվող արքունիքի և պետության հետ կապված խավերին ապահովելու համար կենտրոնական իշխանությունները կառուցուն էին խոշոր շտենարաններ: Դրանք կոչվում էին՝ *ari* և գտնվում էին ինչպես ամրոցների ներսում՝ կայազորի հսկողության տակ, այնպես էլ՝ երկրագործական տարածքների մերձակուրությամբ, թերևս, որպես ամրացված կետ, ինչպիսիք էին ասորեստանյան աղբյուններից հայտնի «քաղաք-շտենարաններ»-ը (^{URU.E}*karme*):

⁷⁰ Belli O. 1995, Van Bölgesinde Urartu Baraj ve Sulama Sisteminin Araştırılması, 1993, “Araştırma Sonuçları Toplantısı” 12, Ankara, pp. 358ff.

⁷¹ Kuşlu Y., Şahin Ü. 2009, Water Structures in Anatolia from Past to Present, “Journal of Applied Sciences Research” 5/12, p. 2113.

⁷² Erdem A.Ü. 2011b, Doğu Anadolu’nun Demir Çağı Aşiretleri, “Türkiye Ülusal Bilimler Akademisi Arkeoloji Dergisi” 14, Ankara, s. 62-63; Çifci A., Greaves A.M. 2013, Urartian Irrigation Systems: A Critical Review, “Ancient Near Eastern Studies” 50, pp. 203ff.

⁷³ Բնուրազնան համար տես Jones R.J.B. 2001 (ed.), Routledge Encyclopedia of International Political Economy, vol. 3, London – New York, pp. 1475ff. (statism).

⁷⁴ Սիրիամիջազետքյան աշխարհում վերաբաշխման համակարգի համար տես, մասնավորպապես, Polanyi K. 1944 [2001], The Great Transformation. The Political and Economic Origins of Our Time, Boston, pp. 53ff.; նոյնի՛ 1957, The Economy as Instituted Process, in: Polanyi K., Arensberg C.M., Pearson H.W. 1957, Trade and Market in the Early Empires. Economies in History and Theory. Glencoe, Illinois, pp. 250ff.; Liverani M. 2006, Uruk: The First City (Edited and translated by Zainab Bahrani and Marc Van De Mieroop). London, pp. 7ff.; McGeough K.M. 2007, Exchange Relations at Ugarit, ANES Supplement 26. Leuven – Paris – Dudley, MA, pp. 20ff.

Ծտեմարամների կառուցման մասին մինչ օրս հայտնի են չորս արքաների թողած 37 արձանագրություն՝ մոտ 414 հազ. *kapi* ընդհանուր տարրության մասին նշումով: Ենթադրելով, որ մեզ հասած գրավոր աղբյուրներում վկայված բոլոր շտեմարանները շարունակվել են օգտագործվել նաև Ք.ա. 7-րդ դ-ի առաջին կեսին, ապա դրանցում պահպող և վերաբաշխման ենթակա հացահատիկի քանակությունը բավարար կլիմեր ողջ տարին հացով ապահովվելու մոտ 6.5 հազ. ընտանիքի կամ մինչև 32.5 հազ. մարդու: Արարատյան դաշտավայրում Ք.ա. 9-8-րդ դրում հիմնադրված 3 խոշոր կենտրոններին հարող երկրագործական գոտին (Արտաշատի ուրարտական աճրոց կամ Մենուախինիլի, Էրեբունի, Արգիշթիհինիլի) շուրջ 30-35 հազ. հա, կարող էր ողջ տարին կերակրել 14 հազ. ընտանիքի կամ 56-70 հազ. բնակչություն: Համեմատության համար նշենք, որ ասորեստանյան տերության գլխավոր երկրագործական գոտիներից մեկը՝ Խարուր գետի ստորին ավազանը, նորասորեստանյան շրջանում ունենալու էր մոտ 30-35 հազ. բնակիչ և հաշվի առնելով ոռոգովի հողերի պոտենցիալը՝ մոտ 23-33 հազ. հա, ի գորու էր կերակրելու ընդհուար մինչև 45 հազ. բնակչություն⁷⁵: Ուրարտական տեքստերում համերապող գարու արավելագույն թիվն արտահայտված *kapi-*ներով հասնում էր 1022 հազ. 133-ի կամ մոտ 25.5 մլն. լ-ի: Այդ քանակությունը կարող էր ողջ տարին ապահովել ավելի քան 26.6 հազ. ընտանիքների կամ ընդհուար մինչև 133 հազ. բնակչության սնունդը:

Սսվածը, այնուամենայնիվ, չի նշանակում, թե բիայնական տիրապետության տակ ընկած ողջ տարածքի բնակչությունը պարենավորվում էր պետության կողմից, ինչպես դա ենթադրվում է, օրինակ, Ուրի III հարստության համար (շուրջ 300 հազ. մարդ⁷⁶): Վերաբաշխման բիայնական համակարգն ավելի շուտ հիշեցնում էր էրլայական կամ նորպալատական շրջանի կրթավական համակարգը, եթե միջոցների հավաքումն ու վերաբաշխումը պետության կողմից ուղղված էր հասարակության իշխող, սպասարկող և ծառայող խավերին,⁷⁷ որից դուրս էր մնում համայնքը, ներ պարագայում կախյալ և հպատակ բնակչությունը:

⁷⁵ Morandi Bonacossi D. 1996 [2012], Tra el fiume e la steppa. Insediamento e uso del territorio nella bassa valle del fiume Hâbûr in epoca neo-assira, “History of the Ancient Near East, Monographs” 1, Padova, pp. 79, 195, 202s.

⁷⁶ Waetzoldt H. 1987, Compensation of Craft Workers and Officials in the Ur III Period, in: Powell M.A. 1987 (ed.), Labor in the Ancient Near East, “American Oriental Series” 68, New Haven, p. 119; Renger J. 1994, On Economic Structures in Ancient Mesopotamia, “Orientalia, Nova Series” 63/3, pp. 176ff.; Van De Mieroop M. 2004, Economic Theories and the Ancient Near East, in: Rollinger R., Ulf Ch. 2004, Commerce and Monetary Systems in the Ancient World. Means of Transmission and Cultural Interaction. Proceedings of the Fifth Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project. Held in Innsbruck, Austria, October 3rd-8th, 2002. Stuttgart, p. 59.

⁷⁷ Christakis K.S. 2011, Redistribution and Political Economies in Bronze Age Crete, “American Journal of Archaeology” 115/2, Baltimore / Princeton, pp. 200ff. Մայոցամաքային Հոմնաստանի համար սեւ Palaima T.G. 2004, Mycenaean Accounting Methods and Systems and Their Place within Mycenaean Palatial Civilization, in: Hudson M., Wunsch C. 2004, Creating Economic Order. Record-Keeping, Standardization, and the Development of Accounting in the Ancient Near East, vol. IV, Bethesda, Maryland, p. 284:

Առկա աղբյուները թույլ են տալիս նշելու, որ Բիայնիլի-Ուրարտուում հաստատված հողատիրության ձևը սերտորեն ազդված էր իին առաջավիրասիական և հատկապես՝ խեթա-միտանական և/կամ միջինասորենտանյան հողատիրական համակարգերից և դրանց յուրատեսակ սինթեզ էր: Միաժամանակ, ի տարբերություն Սիօվագետքի, ուր Ենթադրվում է հողատիրության երեք ձև՝ ինստիտուցիոնալ, մասնավոր և համայնական⁷⁸, Բիայնիլի-Ուրարտուում մենք Ենթադրում ենք հողատիրության երկու ձև՝ տաճարային/պալատական կամ այլ կերպ ասած՝ ինստիտուցիոնալ, և համայնական: Բիայնիլի-Ուրարտուում մասնավոր հողատիրություն մենք չենք տեսնում:

Բիայնիլի-Ուրարտուում հողատիրության հիմնական ձևը կապված էր *iskāru*-ծառայության հետ, որի վկայությանը մենք հանդիպում ենք ուրարտական տեքստերից մեկում: Վկայություններ կամ նաև այստեղ *ilku*-ծառայության գոյության մասին: Սրանք պայմանական հողատիրության ձևեր են, երբ ծառայության դիմաց այն կատարողները պետությունից ստանում են հողատարածքներ՝ այդ հողին ամրացված կախյալներով, նրանց էր պատկանում այդ հողից ստացվող բերքի մի նասը, բայց հողը չէր տրվում որպես սեփականություն և կարող էր հետ վերցվել, այն չէր կարող օտարպել կամ ժառանգվել, բայց կարող էր փոխանցվել հորից որդի, եթե որդին շարունակեր կատարել նոյն ծառայությունը⁷⁹: Այդ համակարգին հանդիպում ենք նաև խեթական տերության մեջ (*IL-KU, saljhan*⁸⁰), Ուգարիթում, Միտաննիում (*ilku*, խուռ. սուսք) և վերջինիս Ենթակա Առավինեի թագավորությունում, այն դեռևս հիմքարելունան շրջանից սկսած գործում էր Բարելոնիայում, իսկ Նորբարելունան թագավորության անկումից հետո նույտ գործեց նաև Աքենենյան տերություն: Դիմառաջավիրասիական գուգահեռներից հիմնական տարբերությունը կայանում էր նրանում, որ որպես գերագույն հողատեր համուս էր գալիս պալատը/տաճարը (=պետությունը): Ըստ այդմ, պայմանագրային հարաբերությունների այնպիսի համակարգ, որը գործում էր սիրիամիջազգետքյան աշխարհում (արքա – վարձակալ, տաճար – վարձակալ, խոշոր հողատեր – վարձակալ և վարձակալ – երկրորդ վարձակալ), Բիայնիլի-Ուրարտուում մենք չենք Ենթադրում:

Հողերը բաժանվում են մի քանի կարգի՝ «աղեղի հող» (A.ŞÀ GIŚ.BAN) կամ «աղեղի տուն» (աքք. *bīt qašti*), «ձիու հող» կամ «ձիու տուն» (A.ŞÀ ANŠU.KUR.RA կամ *bīt sisī*) և «մարտակառի հող» կամ «մարտակառի տուն» (A.ŞÀ GIŚ.GIGIR կամ *bīt narkabti*): «Պետությունից բիայնացի զինվիրականը կարող էր ստանալ առնվազն 6 հա հող՝ 2-4 աշխատող ձեռքով, եթե ծառայում էր հետևազորում, նոտ 8-10 հա և

⁷⁸ Renger J. 1994, նշվ. աշխ., pp. 157ff.

⁷⁹ Postgate J.N. 1974, Taxation and Conscription in the Assyrian Empire, “*Studia Pohl: Series Maior*” 3, Rome, pp. 81ff.; նոյնի՝ 1982, *Ilku and Land Tenure in the Middle Assyrian Kingdom: A Second Attempt*, in: Dandamayev M.A., Gershevitch I., Klengel H., Komoróczy G., Larsen M.T., Postgate J.N. 1982 (eds.), *Societies and Languages in the Ancient Near East: Studies in Honour of I.M. Diakonoff*, Warminster, p. 307; De Graef K. 2002, An Account of the Redistribution of Land to Soldiers in Late Old Babylonian Sippar-Amnānum, “*Journal of the Economic and Social History of the Orient*” 45/2, Leiden, p. 146.

աշխատող ծեռք, եթե ծառայում էր հեծելազորում, 15 և ավելի հա՞ առնվազն 6 աշխատող ծեռքերով, եթե մարտակառքի տեր էր: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ բիայնացի գինվորականը երկրագործական աշխատանքներով չէր զբաղվելու:

Աշխատող ուժի պակասը պետությունը լրացրել է լայնածավալ գերեվարությունների և նպատակային վերաբնակեցումների միջոցով: Մեզ հասած ուրարտական սեպագիր աղբյուղների տվյալներով՝ գերեվարվածների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 630 հազ. մարդ: Ընդ որում, ուշադրություն է գրավում, որ մեզ հասած աղբյուղներում գերիների մեջ տղամարդիկ կազմել են բավական փոքր թիվ, ըստ պահպանված տվյալների՝ ընդհանուր քանակի մոտ 4.2 տոկոսը: Փոխարենը՝ գերեվարվածների ճնշող մասը կազմել են կանայք և դեռահաս տարիքի երեխանները: Ինչպես երևում է՝ ուրարտացի իշխողները ոչնչացրել են չափահաս/զենք կրելու ունակ արական բնակչությանը: Այդ առումով պատահական չենակ, որ գերեվարված տղամարդկանց կապակցությամբ ուրարտական աղբյուղներու հատկապես շեշտում են նրանց կենդանի տանելու մասին (տես *Ti^{MES}/šeširi* արտահայտությունը՝ «կենդանի տղամարդիկ») կամ «կենդանի (տարված) տղանարդիկ»: Այս երևույթն ամենակին խորը չէր Յին Կրսելքին⁸⁰:

Գերկենտորնացված տնտեսության պայմաններում և քաղաքային կյանքի փաստացի բացակայությամբ պայմանավորված՝ Բիայնիլի-Ուրարտուից մենք չունենք երկրում ազատ տնտեսական/շուկայական հարաբերությունների գոյության որևէ վկայություն, օրինակ՝ տվյալներ երկրում ապրանքների առք ու վաճառքի, որամի շրջանառության և շուկայական գների, վարկավորնան, գրավադրման, փոխանակման կամ տնտեսական այլ գործունեության մասին: Ակնհայտորեն, տաճարային/պալատական համակարգը խոչնորու էր հանդիսացել մասնավոր ծեռնարկատիրության կայացման համար, ինչը բնութագրական էր տաճարային/պալատական համակարգը ունեցող այլ երկրների ևս, օրինակ՝ կրետենիկենյան աշխարհին⁸¹: Այդ նույն պատճառով՝ Բիայնիլի-Ուրարտուում մերքին տնտեսական կապերը խիստ թույլ էին, իսկ արտաքին առևտուրն ամբողջությամբ գտնվում էր պետության ծեռքին:

⁸⁰ Շումերական օրինակի համար տե՛ս Դյակոնով И.М. 1963б, Община на древнем Востоке в работах советских исследователей, “Вестник древней истории” 1 (83), Москва, с. 16. «Աստվածաշնչից» հայտնի օրինակների համար տե՛ս Zorn J.R. 2014, War and Its Effects on Civilians in Ancient Israel and Its Neighbors, in: Nadali D., Vidal J. 2014 (eds.), The Other Face of Battle. The Impact of War on Civilians in the Ancient Near East, “Alter Orient und Altes Testament” 413, Münster, pp. 85-86.

⁸¹ Walberg G. 1995, Minoan Economy: An Alternative Model, in: Laffineur R., Niemeier W.D. 1995 Politeie: Society and State in the Aegean Bronze Age. Proceedings of the 5th International Aegean Conference, University of Heidelberg, Archaeologisches Institut, 10-13 April 1994, vol. I, “Aegaeum” 12, Liège, pp. 157ff.: Հինասահապահասկան և միկենյան զուգսեհների համար տե՛ս Liverani M. 1987, The Collapse of the Near Eastern Regional System at the End of the Bronze Age: The Case of Syria, in: Rowlands M., Larsen M., Kristiansen K. 1987 (eds.), Centre and Periphery in the Ancient World, Cambridge, pp. 66ff.

Գլուխ Դ

ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՌՈՒԻ ԿԱՍՄԱԿՈՒԹՅԱՎԱ ՍՈՑԻԱԼԱԿԱՎԱ ԿԱԶՄԸ

Գլուխը բաղկացած է չորս բաժիններից: Առաջին բաժնում քննարկվում են Բիայնիլի-Ուրարտուի իշխող խավին Վերաբերող տվյալները, որի առաջին ենթաբաժինը վերաբերում է արքայական ընտանիքի անդամներին: Բիայնական արքայի և արքայական ընտանիքի անդամների մասին տեղեկությունները ըստ Էւլիքան հայտնի չեն, իսկ պատկերագրության մեջ հանդիպում ենք միայն սակավաթիվ վկայությունների: Նման «մթության» պատճառը երկրում իշխող «խալդակենտրոն» գաղափարախոսությունն էր, որը երկրորդ պլան էր մղում արքայի անձը: Սակայ են տեղեկությունները նաև թագուհիների մասին: Ուրարտական տեքստերից առայժմ հայտնի են միայն երեք կանաց անուններ, որոնցից մեկը վերականգնվում է մեր կողմից: Այդ անուններից միայն մեկի դեպքում վստահ կարող ենք նշել, որ նա թագուհի է: Խոսք Կակուլիի մասին է (^{SAL}*qaqulī*), ով, անձնայն հավանականությամբ, Ուսաա Արգիշտորոդ կինը կարող էր ⁸²: Մենք ենթադրում ենք նաև, որ Սարդուրի Ուսաայորդու կինը կարող էր լինել ասորեստանյան արքա Աշուրբանիպալի դուստրը:

Ուսաակիմիլի Կիլբանիկայից (Թոփորքքալե) հայտնաբերված և այդ կենտրոնի հետ կապված խավերին թվակլող տեքստում մենք վերականգնում ենք «հարեմ» նշանակող գաղափարագիրը (բառացի՝ «պալատի կիմ ժողովուրդ», «պալատի կանայք»), ընդ որում, հայտնի է դարնում նաև հարեմի կանաց թիվը՝ 90 հոգի: Սիանձին ենթաբաժնում քննարկում ենք նաև բիայնական/ուրարտական արքայատան դինաստիական կապերին վերաբերող տվյալները:

Դաշտորդ ենթաբաժնում քննարկվում է բիայնական/ուրարտական հասարակության իշխող խավը կամ «ազնվականություն»-ը՝ ^{LÚ}*mari(ni)*-ն: Այդ տերմինը ունի հնդարիհական ծագում և վկայված է դեռևս Ք.ա. 2-րդ հազ-ի առաջին կեսի գրակոր աղբյուրներում «ազնվական», «կառամարտիկ» նշանակությամբ (*maryannu*): Բիայնական/ուրարտական պատկերագրության ռազմի, «որս»-ի կամ «շքերթներ»-ի տեսարաններում պատկերված կառամարտիկ և հեծյալ ռազմիկները, ամենայն հավանականությամբ, ներկայացրել են ^{LÚ}*mari(ni)*-խավի անդամներին:

Դարավոր է, որ Ուրարտուում ^{LÚ}*mari(ni)*-խավի անդամը արքայի հետ կապվում էր հասուկ երդումով: Կարծում ենք, որ ^{LÚ}*mari(ni)*-խավի անդամները արքայի կողմից տրվում էր բրոնզե գոտի, որը խորհրդանշում էր այդ կապը: Այդ առումով հետաքրքիր գոտգահեր կարող է լինել հինապարսկական *bandaka*-ն: Այդպես էն կոչվում պարսկե ազնվականները, որոնց կրած լայն գոտիները (հինապարսկ. *ba'd* «կապ»), խորհրդանշում էն արեմնեյան արքայից արքային տրված հավատարմության երդումը⁸³: Մենք ենթադրում ենք, որ նման անձնիք են, որ ուրարտական աղբյուրներում հանդես են գալիս որպես «բիայնացի» (^{KUR}*biainiše*) և որ

⁸² Salvini M. 2014, Lo “scettro” d’oro della regina di Urartu, in: Ghidini M.T. 2014 (ed.), Aurum. Funzioni e simbologie dell’oro nelle culture del Mediterraneo antico, Roma, pp. 17f.

⁸³ Herrenschmidt C. 1987, Banda “Servant”, ii. Old Persian *bandaka*, in: Yarshater E. 1987 (ed.), Encyclopædia Iranica, vol. II, London – New York, pp. 683–684.

այդ տերմինը, որը սովորաբար հակադրվում է «քարբարոս»-ին (^{KUR}*luluniše*), չի նշանակում պարզապես Բիայնիլի-Ուրարտուի բնակիչ, այլ, ավելի շուտ, Վերաբերում է Բիայնիլի-Ուրարտուի «քաղաքացուն»: Դրա հինառաջավորասիական գուգահեռը մենք տեսնում ենք Միտաննիում՝ ի դեմս *hanigalbatūtu*-ծառայության: Այն ստանձնելով՝ այս կամ այն անհատը, ում հետ նաև՝ նրա ընտանիքը, դառնում էր «խամճագալքատոց», այն է՝ «միտաննացի»^{84:}

Պատկանելությունը ^{LÚ}*mari(ni)*-խավին, ամենայն հավանականությամբ, ժառանգական էր: Միաժամանակ, հինարևելյան գուգահեռները կարող են հուշել, որ Բիայնիլի-Ուրարտուում ևս հնարավոր էր ծառայության միջոցով հասմել ^{LÚ}*mari(ni)*-աստիճանի: Յամենայն ոփաս, հինարևելյան աղբյուրներից հայտնի է, որ այլ խավի պատկանող անձը արքայի հրամանով ստանձնում էր *maryannūtu*-ծառայությունը և դասվում էր «մարյանուներ»-ի շարքը^{85:}

Այդպիսով, կաթելի է կարծել, որ Ուրարտուում ևս ^{LÚ}*mari(ni)*-ն ուներ գուտ սոցիալական իմաստ և ներկայացնում էր պետության վերնախավը: Նրա ձեռքին էր գտնվում քաղաքական, քրմական և ռազմական իշխանությունը երկրում կամ մասնակցում էր դրա հրականացմանը: ^{LÚ}*mari(ni)*-խավի անդամն, ենթադրելի է, ազատված էր հարկերից:

^{LÚ}*mari(ni)*-խավի շարքում ամենաբարձր դիրքը գրադեցնում էին *tardašhe* կոչվող խնճի անդամները: Վերջիններս ներկայացնում էին բիայնական արքայի մերձավոր հարազատներին և երկրի խոշոր ազնվականական տներից սերող ռազմական/քրմական վերնախավի անդամներին՝ երկրի «մեծամեծներ»-ին, ինչպես անվանում էին նրանց ասորեստանցիները (LÚ.МАՀ.МЕШ/LÚ.GAL.MES):

Մոտ հայուր հոգի կազմող այդ խնճի անդամներն էին երկրի ռազմական, քաղաքական և հոգևոր կյանքի հիմնական դերակատարները: Այդ խնճին հասանելի էին պետական միջոցները (պետական արհեստանոցների մետաղի արտադրանք, թանկարժեք մետաղներ, «պալատական» խեցեղեն, սնունդ, հագուստ ևն), ենթադրելի է, որ միայն այդ խնճի անդամներն իրավունք ունեին կրեուլ իրենց սեփական կնիքը: Կնիքը խորհրդանշում էր նրանց իշխանությունը և կապը պալատի/տաճարի հետ: Նրանք տիրել են հարուստ-դրվագված գեների և զինվորական հանդերձանքի, պարտավոր են եղել պահել ծի(եր), մարտակառք(եր) և մասնակցել արշավանքներին՝ կազմելով կառամարտիկ ուժերը: Միաժամանակ, տարբերվել են բնակության բարվոր պայմաններով, իրավունք են ունեցել կառուցելու վիճակիր հանդիսավոր դամբարաններ, որոնց ճարտարապետությունը միանգանայն համեմատելի է արքայական դամբարանների հետ:

⁸⁴ von Dassow E.M. 2014, Levantine Polities under Mittanian Hegemony, in: Cancik-Kirschbaum E., Brisch N., Eidem J. 2014 (eds.), Constituent, Confederate, and Conquered Space: The Emergence of the Mittani State. “Topoi. Berlin Studies of the Ancient World” 17, Berlin – Boston, pp. 21ff.

⁸⁵ Cooper J., Schwartz G., Westbrook R. 2005, A Mittani-Era Tablet from Umm el-Marra, “Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians” 15, Winona Lake / Maryland, p. 48.

Երկրորդ բաժինը վերաբերում է ուրարտական հասարակության ծառայող խավին: Ծարայող խավի հիմնական զանգվածը կազմել են «զինվիրականներ»-ը՝ ^{LÜ}*buradinili*-ն: Այդ խավի մեջ առավել բարձր դիրք ունենալի ^{LÜ}*mari(ni)*-«ազնվականության»-ը նաև կազմող ^{LÜ}*kirini*-խմբի անդամները: Վերջիններս, հավանաբար, ներկայացրել են երկրի խոշոր ազնվականական տների կրտսեր անդամներին, թերևս նրանց, ովքեր հինգարևեյան առյուղներում հանդես են գալիս որպես «մարյանուի եղբայր»⁸⁶: Եթե զուգահեռ տաճենք միջնադարյան Զայաստանում գործող նախարարական համակարգի հետ, ապա ^{LÜ}*kirine*-ին ամենամոտ խավը կարող ենք համարել նախարարական տների կրտսեր անդամներին՝ սեպուհներին: Ծառայող խավի մեջ ենք մենք ներառում նաև այսպես կոչված «սպասավորներ»-ին (^{LÜ}IR/ERUM/^{LÜ}*bura*): Զայտնի է, որ նրանք տիրել են հողերի, պետության համար կատարել տարրեր ծառայություններ և ընդգրկվել են նաև բանակի շարքերում որպես քաղաքացիական անձինք (գրագիրներ, զինագրդներ, փայտագործ արհեստավորներ, դերձակներ, երաժիշտներ և այլն):

Երրորդ բաժնում քննարկվում են հասարակության ստորին՝ կախյալների խավին վերաբերող տեղեկությունները: Ուրարտական առյուղներից դատելով՝ նորանվաճ տարածքներում որպես աշխատուժ էին ծառայում գերեվարությունների ժամանակ ծեռք բերված «կանայք» (^{LÜ/MUNUS}*qediani*) և «դեռահասներ»-ը (^{LÜ}*ubše*/^{LÜ}É.S.GAR): Այդ տերմինների համար հնարավոր է թվում վերականգնել նույն բովանդակությունը, ինչ շում, շատակ և գեմեց-ն, այն է՝ «կախյալ տղամարդ աշխատավոր» և «կախյալ կին աշխատավոր»: Մեր կողմից վեր հանդող ^{LÜ}É.S.GAR(MES) տերմինը վկայում է, որ նրանք դիտվել են որպես պետական տնտեսության աշխատողներ (iškāru-աշխատանք կատարողներ) և հիմնականում բնակեցվել են գյուղական միջավայրում: Նշված «դեռահասներ»-ն ու «կանայք» չեն հանարվել ստրուկտոր, այլ դիտարկվել են որպես պետական սեփականություն, սահմանափակվել են նրանց տեղաշարժը: Այդ արումով նրանք նմանվել են *silišlu*-կախյալներին կամ «ճորտեր»-ին⁸⁷, միջնասորենստանյան դարաշրջանում, և NAM.RA/arnuwalaš-խմբի մարդկանց՝ խեթական տերության գոյության շրջանում⁸⁸: Այստեղ տեղին է հիշել Սպարտայի նվաճյալ բնակչության՝ հելլուների կարգավիճակը⁸⁹ և

⁸⁶ Jankowska N.B. 1981, Life of the Military Élite in Arraphe, in: Morrison M.A., Owen D.I. 1981 (eds.), Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians (in Honor of E.R. Lacheman on His 75th Birthday), Winona Lake, Indiana, pp. 195ff.

⁸⁷ Postgate 2008, նշվ. աշխ., pp. 88-89; Wiggermann 2000, նշվ. աշխ., p. 174.

⁸⁸ Hoffner H.A., Jr. 2002, The Treatment and Long-Term Use of Persons Captured in Battle according to the Mašat Texts, Yener A.K., Hoffner H.A., Jr. 2002 (eds.), Recent Developments in Hittite Archaeology and History, Papers in Memory of Hans G. Güterbock. Winona Lake, pp. 61ff.

⁸⁹ Հելլուների խավի համար տես Cartledge P. 2002, Sparta and Lakonia. A Regional History 1300-362 BC (Second Edition), London – New York, pp. 138ff. Հին Աստվածաբանություն այդ խավի բնորոշումը որպես «հելլուներ»-ի կիրառում է Իգոր Դյակոնովը: Տե՛Շ Դյակոնով Ի.Մ. 1973, Рабы, илоты и крепостные в ранней древности, “Вестник древней истории” 4 (126), Москва, с. 11 сл., 17 сл.

կարելի է զուգահեռ տանել «մշակներ»-ի խավի հետ արդեն Արտաշեսյան Շայաստանում⁹⁰: Այդպիսով, մեր կարծիքով, ուրարտական պալատական/տաճարային տնտեսության հիմնական արտադրող խավը եղել են հողին աճրացված «կախյալներ»-ը կամ «պետական ճորտեր»-ը: Ստրկական ուժի կիրառություն Ուրարտուում մենք չենք տեսնում:

Եվ վերջին՝ չորրորդ բաժնու վերաբերում է «հպատակների խավ»-ին: Վերջիններիս շաբթում մենք ներառում ենք տեղական բնակչությամբ, որը պահպանել է իր համայնական կառույցը և ներքին ինքնավարությունը, վարել սեփական տնտեսություն, իսկ բիայնական գերիշխանության հանդեպ դիրքորոշումն արտահայտվել է լոյալությամբ և ստանձնած պարտավորությունների կատարմամբ: Նոյնը վերաբերում է այն տարածքներին, որոնց բնակչությունը բիայնական նվաճումից հետո թողնվել է տեղում: Այդ դեպքում տեքստերում շեշտվում է երկիրը «բնակչությամբ հանդերձ իմ երկրին» ավելացնելու նախն միտքը (¹⁰*taršuanaranani abilidubi KUR ebaniukiedi*): Հպատակների խավի մեջ ենք ներառում նաև վերաբերակիշմներին: Ի տարբերություն Ասորեստանի՝ Բիայնիլի-Ուրարտուում նպատակային վերաբերակեցումների մասին տեղեկությունները խիստ սակավ են: Այնուամենայնիվ, հայտնի մի քանի վկայությունները թույլ են տալիս մտածելու, որ նվաճված համայնքը տեղահանվել և վերաբերակեցվել է տերության այլ տարածքում՝ պահպանելով հանայնքի ամբողջականությունը: Այդ օրինակները համարենի են ասորեստանյան աղբյուրների տեղեկություններին՝ նվաճված երկրի բնակչությանը իր ունեցվածքով տեղահանելու և «իմ երկրի նարդիկ» համարենու (ana nišč(UN.MEŠ) mātīya(KUR-ia) amnu) կամ «Ասորեստանի ժողովրդին հավելելու» նախն (...it i nišč māt(KUR) aššur amniššutūti)⁹¹:

Եղրակացության բաժնում, իրեն աշխատանքի անփոփում, ներկայացված է Բիայնիլի-Ուրարտուի պետության և հասարակության ուսումնասիրության հիմնական արդյունքները: Գրավոր (սեպագիր) և հնագիտական տվյալների հետազոտություններից մենք հանգել ենք հետևյալ եղրակացությունների:

1. Բիայնիլի-Ուրարտուն աստվածապետություն էր: Դիցարանի գերագույն՝ Խալիլի աստվածն ընկալվում էր իրեն արքա, ուն անունից Խալիլի աստծո «տեղապահ»-ն իրականացնում էր երկրի կառավարում:
2. Երկրի կառավարումն իրականացվում էր նայուաքաղաքից՝ բազմաստիճան և մեծարիկ պաշտոններյան միջոցով: Ուրարտական սեպագիր աղբյուրները տեղեկություններ են տալիս կառավարման համակարգում գոյություն ունեցող առնվազն տասնչորս տարբեր պաշտոնների մասին: Ինը այլ պաշտոններ վերաբերում են ծառայող և սպասարկող անձնակազմին: Եվս տասը պաշտոնների նշանակությունը մնում է առաջմ անհայտ:

⁹⁰ Տե՛ս Սարգսյան Գ.Խ. 1962, Դաստակերտները և ազարակները Վ դարի հայկական աղբյուրներում, «Պատմա-բանասիրական հանդես» 3 (18), Երևան, էջ 87-94:

⁹¹ Մասնաւան տես Oded B. 1979, Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire, Wiesbaden, pp. 81ff.

3. Բիայնիլի-Ուրարտում ուներ վերաբաշխման համակարգի վրա հիմնված գերկենտրոնացված տնտեսություն, որը մենք բնութագրում ենք իրևս «էռատիզմ»:
4. Ի տարբերություն Միջագետքի, ուր ենթադրվում է հողատիրության երեք ձև՝ ինստիտուցիոնալ, մասնավոր և համայնական, Բիայնիլի-Ուրարտուում տեսանելի է հողատիրության երկու ձև՝ տաճարային/պալատական (ինստիտուցիոնալ) և համայնական: Մասնավոր հողատիրության գոյություն Ուրարտուում մենք չենք տեսնում:
5. Որպես գերագույն հողատեր Բիայնիլի-Ուրարտուում հանդիս էր գալիս տաճարը/պալատը (=պետությունը), իսկ հողատիրության համակարգը ազդված էր ինը առաջավիրահական և հատկապես՝ խեթամիտաննական ու միջինասորենտանյան հողատիրական համակարգից:
6. Պալատական/տաճարային տնտեսության հիմնական արտադրող խավը եղել են հողին ամրացված «կախյալներ»-ը կամ «պետական ճորտեր»-ը: Ստրկական ուժի կիրառություն Ուրարտուում չի երևում:
7. Պայմանական հողատիրության իրավունքով պետությունից ստացված կալվածքները կամ «դաստակերտներ»-ը ընդգրկել են տասնյակ հա հողատարածք և, թերևս, կը զեւկել են *burganan*: Վերջինս կարող էր նշանակել «աշտարակ»՝ նախատիպ ունենալով միտաննական *dimitukalvazadzor* (բառացի՝ «աշտարակ»):
8. Պալատական/տաճարային տնտեսության մաս են կազմել արհեստանոցները: Դրանք պատվերները ստացել են պետությունից, արհեստավորներն ազատ չեն ստեղծագրից այլ, կատարելով պետպատվերը, արտադրել են ստանդարտացված արտադրանք: Պետությունն է մատակարարել հումքը և հոգացել նրանց ապրուստը:
9. Կամ տվյալներ պետության կողմից չափ ու կշռի միավորների ստանդարտացման կամ պետական միավորների հաստատման մասին: Կշռի հիմնական միավոր էր սահմանվել տաղանդ՝ 35 կգ արժեքով: Այն կազմում էր 50 «մինա», իսկ 1 «մինա»-ի արժեքը հավասար էր 700 գրի: Մեկ տաղանդը կամ 50 մինան հավասար էր 3000 սիկդի՝ 1 մինա = 60 սիկդ հարաբերակցությամբ: Ըստ այնի 1 ուրարտական սիկդի արժեքը կազմում է մոտ 11.7 գրամ, որը 1 սիկդի արժեքն է նաև փոքրասիհական-լևանտ-փիրիական համակարգում («խեթական սիկդ»): «Խեթական սիկդ»-ի կիրառությունը Բիայնիլի-Ուրարտուում կարող էր պայմանավորված լինել արտաքին առևտորում ուշխեթական թագավորությունների ունեցած միջնորդ դերակատարությամբ:
10. Բիայնիլի-Ուրարտուում իշխող և հայտակ խավերի միջև շփումը հասցված էր նվազագույնի: Տերության բնակչության գգալի մասը կազմող հպատակ և կախյալ խավերը այդպես էլ չեն ինտեգրվել բիայնական պետական համակարգին, հաղորդակից չեն դարձել բիայնական տերունական մշակույթին, նրանց շրջանում չի տարածվել իշխողների լեզուն: Բիայնական պետական համակարգից դուրս մնալով՝ այդ խավերը սպասում էին միայն համակարգի վլուզմանը և հետագայում լրացրեցին այն վակուումը, որն առաջ եկավ համակարգի վլուզումից հետո:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ԴՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Ուրարտու և Մանա (մերձուրմյան ավազանում ուրարտական տիրապետության հաստատման խնդրի շուրջ), «Արևելք», Երևան, 2001, էջ 5-19:
2. Ուառչի ճակատամարտը (պատմա-համենատական վերլուծություն), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ 21, Երևան, 2002, էջ 180-199:
3. «Երկրագործական տարածքներն ու ոռօգման համակարգը հյուսիս-արևմտյան իրանում ըստ սեպագիր աղբյուրների», «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2 (160), Երևան, 2002, էջ 214-232:
4. Ուրարտական աստվածապետության առանձնահատկությունների շուրջը. Ուրարտուի արքաները (նախնական դիտարկումներ), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ 23, Երևան, 2004, էջ 315-338:
5. Գյովելքի ուրարտական արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1 (165), Երևան, 2004, էջ 224-252:
6. Դրվագներ ուրարտա-մուծածիրյան հարաբերությունների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ 24, Երևան, 2005, էջ 277-294:
7. Տիգրանյան Յայաստան. ընտրովի սահմաններ, ընտրովի աշխարհագրություն, «Տիգրան Մեծ. Գահակալության 2100 ամյակ» (Զեկուցումների հիմնադրույթներ), Երևան – Օշական, 2005, էջ 49-50:
8. Կմն Ուրարտուում. Ուրարտուի թագուհիները: «Ծնորի ի վերուստ. առասպել, ծես և պատմություն». Պետրոսյան Ա. 2008 (խմբ.), Յոդվածների ժողովածու նվիրված Սարգսի Յարությունանի 80-ամյակին, Երևան, 2008, էջ 292-309:
9. Սարգսի անվան մեկնության մի նոր փորձ, Ավետիսյան Պ., Պետրոսյան Ա. 2010 (խմբ.), Խալյան զորությամբ... Յոդվածների ժողովածու նվիրված Բորիս Պիտորովսկու 100-ամյակին: Երևան, 2010, էջ 78-87:
10. Վաճը հնադարում (Տուրուշպա, Տուշպա, Տոսպ), «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 3 (185), Երևան, 2010, էջ 3-19 (համահեղինակ՝ Ս. Շնայվալյան):
11. Վաճի թագավորության անկման խնդրի շուրջ, Բարխուդարյան Վ.Բ. 2013 (գլու. խմբ.), Յայկագումիներ. առասպել և պատմություն, Երևան, 2013, էջ 64-82:
12. Տուշպա քաղաքը և թիայնական (ուրարտական) պետության կազմավորման որոշ հարցեր, Մարության Հ.Տ. 2013 (խմբ.), Յայաստանի մայրաքաղաքները, Գիրք I. Վաճ (Վաճ քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու [7-9 հոկտեմբերի 2010թ.]), Երևան, 2013, էջ 48-58:
13. Ուրարտական տերության անկման բնակլիմայական վարկածը, Փիլիհպոյան Ա., Ավետիսյան Յ., Սարգսյան Յ., Պետրոսյան Յ., Ավետիսյան Պ. 2013 (խմբ.), Պատմամշակութային ժառանգության պահպանման հիմնախնդրները: Միջազգային գիտաժողովի նյութեր [25-27 սեպտեմբեր 2010թ.], Երևան, 2013, էջ 12-13:
14. Էրիուցիները ուրարտական պատկերագրության մեջ, Յոդվածների ժողովածու նվիրված Գ. Տիրացյանի ծմբայան 85-ամյակին, «Դիմ Արևելք», հասոր 1 (6), Երևան, 2014, էջ 36-56:
15. An Urartian Bracelet from Gilan, “Iran and the Caucasus” 8/1, Leiden, 2004, pp. 1-6 (co-author: T. Dalalian).

16. Urartian Oracle Texts? (Preliminary Study), in: Дандамаева М.М., Коган Л.Е., Козлова Н.В., Медведская И.Н. 2005, ЭДУББА вечна и постоянна. Материалы конференции, посвященной 90-летию со дня рождения Игоря Михайловича Дьяконова, Санкт-Петербург, 2005, pp. 39-50.
17. The Will of Menua and the Gods of Urartu, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 1, Yerevan, 2006, pp. 150-195.
18. Review of: Seidl U. 2004, Bronzekunst Urartus. Mainz am Rhein, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 1, Yerevan, 2006, pp. 254-260 (co-author: S. Hmayakyan).
19. When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire), “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 4/2, Yerevan, 2009, pp. 98-126.
20. The Battle of Uauš Revisited, in: Kosyan A., Petrosyan A., Grekyan Y. 2010 (eds.), Urartu and Its Neighbors. Festschrift in Honor of Nicolay Harutyunyan in Occasion of His 90th Birthday (22-24 September, 2009, Yerevan), “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 5/1-2, Yerevan, 2010, pp. 83-108.
21. Storage Buildings of Erebuni and New *Pithos* Inscriptions, Stronach D., Thrane H., Goff C., Farahani A. 2010, Erebuni 2008-2010, in: Kosyan A., Petrosyan A., Grekyan Y. 2010 (eds.), Urartu and Its Neighbors. Festschrift in Honor of Nicolay Harutyunyan in Occasion of His 90th Birthday (22-24 September, 2009, Yerevan), “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 5/1-2, Yerevan, 2010, pp. 129-130.
22. Van. La première capitale d’Arménie, in: Donabedian P., Moutafian C. (éd.), Les douze capitales d’Arménie, Marseille, 2010, pp. 50-61 (coauteur: S. Hmayakyan).
23. Haldi and Aššur: Supreme Gods of Urartu and Assyria, International Symposium on East Anatolia – South Caucasus Cultures, 10-13 October, 2012, Erzurum, 2012, p. 42.
24. Urartu Devlet Pantheonu, “Aktuel Arkeoloji” 31, İstanbul, 2013, s. 130-137.
25. When the Gods Leave People (The Climatological Hypothesis of the Collapse of the Urartian State), in: Kosyan A., Grekyan Y., Bobokhyan A. 2013-2014 [2014] (eds.), The Black & the White: Studies on History, Archaeology, Mythology and Philology in Honor of Armen Petrosyan in Occasion of His 65th Birthday, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 8/1-2, Yerevan, 2014, pp. 57-94.
26. Helmet and Beard: Depicting of Enemies in Urartian Bronze Art, in: Özfirat A. 2014 (ed.), SCRIPTA. Arkeolojile Geçen Bir Yaşam İçin Yazilar. Veli Sevin'e Armağan / Essays in Honour of Veli Sevin. A Life Immersed in Archaeology, İstanbul, 2014, pp. 155-173.
27. The Regnal Years of the Urartian Kings Argišti Menuahı and Sarduri Argištilı, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 9/1, Yerevan, 2015, pp. 91-124.
28. The Gods Aššur and Haldi in the Mountains / Dağlık Bölgenin Tanrıları: Haldi ve Assur, in: Işıkli M., Can B. 2015 (eds.), International Symposium on East Anatolia – South Caucasus Cultures, vol. I, Cambridge, 2015, pp. 388-402.
29. Urartian Inscribed Bronze Artifacts from the Reza Abbasi Museum, Iran, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” 9/1, Yerevan, 2015, pp. 154-158 (co-author: P. Kashani).
30. A Note on the Toprakkale Tablet, “Nouvelles Assyriologiques Brèves et Utilitaires”, N°1, 2016, Paris, p. 54-56.

ГРЕКЯН ЕРВАНД АМБАРЦУМОВИЧ

**БИАЙНИЛИ-УРАРТУ: ГОСУДАРСТВО И ОБЩЕСТВО
(ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)**

Резюме

В представленной работе на основе целостного изучения письменных и археологических материалов исследуется структура урартского государства и общества, а также рассматриваются отдельные аспекты таких вопросов, как система управления, политическая и экономическая география, военное дело, социально-общественный строй, этническая история, язык и письменность, искусство, верования и религия урартского государства. Изучение данной темы позволяет наметить основы зарождения урартской цивилизации, наследие которой отпечаталось на ландшафте и оставило свой след на обитателях Армянского нагорья.

Государство Урарту представляло собой “равнинную цивилизацию” древнепереднеазиатского типа, существование которой во многом было обусловлено земледелием, основанным на искусственном орошении. В отличие от эпох поздней бронзы – раннего железа, жизнедеятельность урартского государства была сосредоточена в низменных и особенно в равнинных регионах. Вследствие формирования подобной государственной модели появилась необходимость коренного преобразования ландшафта и обоснования в равнинных областях с плодородной, но не орошаемой землей. Доказательством тому – развитое гидростроительство и преобразование малонаселенных равнинных долин в центры, обеспечивающие жизнедеятельность государства, с высокой концентрацией населения и экономических ресурсов. Также этой цели служили осуществляемые урартским государством широкомасштабные переселения и взятие в плен целых племен. Последствия подобных кампаний испытывали на себе $\frac{3}{4}$ населения, т.е. около 1 млн. человек.

Урарту являлось государством храмово-дворцового типа, а экономический строй можно квалифицировать как “этатизм”, основанный на системе перераспределения. Организатором экономики, основанной на перераспределении, выступает так называемый “храм-дворец”. Основной производящей прослойкой храмово-дворцового хозяйства были “зависимые” или “илоты”, которые назывались “юношами” (зависимый работник мужского пола юного возраста) и “женщинами” (зависимая работница женского пола). В Урарту не предполагается использование рабского труда.

Основной вид земельной собственности в Урарту можно квалифицировать как условное землевладение, где в качестве главного распорядителя и фактического владельца земельных ресурсов выступал опять-таки храм-дворец. Выделяются две формы землевладения: храмово-дворцовое

(институциональное) и общинное. Частное землевладение в Урарту не предполагалось.

Градостроительство как таковое в Урарту отождествлялось с возведением укрепленного храмово-дворцового комплекса, и само понятие “градостроительства” здесь применимо лишь по той причине, что около подобных центров были выявлены следы размещения жилой части, призванной обслуживать данный комплекс. Такая жилая часть называлась “внешним городом” или смежным поселением.

Вместе с тем сам тип урартской государственности – храмово-дворцовый – исключал возможность какой бы то ни было активной городской жизни в стране, а население городов (или, по крайней мере, его значительная часть) не вело собственного хозяйства и существовало исключительно за счет государственных снабжений. По этой же причине урартский город имел ограниченное население, численность которого была пропорциональна тем функциям, которые были возложены на данный центр, а “население” всего лишь обслуживало “город”.

Ни один урартский город не сопоставим с месопотамскими городами по своей территории и численности населения. В условиях сверхконцентрированного хозяйства и вследствие фактического отсутствия городской жизни в Урарту не предполагалось существования свободных экономических или рыночных отношений. Очевидно, что храмово-дворцовое хозяйство препятствовало становлению частного предпринимательства. По той же самой причине внутриэкономические отношения в Урарту отличались незначительным развитием и слабостью, а внешняя торговля полностью находилась под контролем государства.

Государство Урарту было продолжателем северомесопотамских и североассирийских (митанийских, среднеассирийских) традиций II тыс. до н.э. Дух II тысячелетия до н.э. в Урарту заметен во всем. Присущий II тыс. до н.э. социальный фон проглядывается в составе урартского общества, состоящем из правящей элиты, класса служилых, класса подданных и класса зависимых. Особенности того же II тысячелетия до н.э. усматриваются в самой форме организации урартской экономики, в землевладельческой системе, в градостроительстве и архитектуре жилых построек. С митанийским и среднеассирийским миром Урарту может быть связано посредством какого-либо страны (или колонии) находящийся у верховьев р. Тигр, которое сохранило митанийское или среднеассирийское наследие.

Контакты между правящей элитой и подчиненными классами в Урарту сводились к минимуму. Значительная часть населения государства так и не интегрировалась в урартскую государственную систему, не приобщилась к культуре Урартской империи, и среди этого населения не распространился язык правящего элиты. Оставшись вне урартской государственной системы, данные социальные слои были вынуждены лишь ждать разрушения всей системы и в дальнейшем заполнили возникший в результате такого разрушения вакuum.

GREKYAN YERVAND

BIAINILI-URARTU: STATE AND SOCIETY
(HISTORICAL-ARCHAEOLOGICAL STUDY)

Summary

The presented study investigates the structure and society of the Urartian state based on the complete research of written and archaeological material. It discusses various aspects of the subject: the system of government, political and economical geography, the military establishment, social structure, ethnic history, language and writing, art, beliefs and religion. The study of the theme allows to outline the basis upon which the Urartian civilization originated and, as a heritage, left its stamp on the landscape and population of the Armenian Highland.

The Urartian state was a “lowland civilization” of ancient Near Eastern type, the existence of which was conditioned mainly by agriculture based on artificial irrigation. In contrast to the societies of the Late Bronze and Early Iron Ages, the activity of the Urartian state was concentrated on the planes and, in particular, in the lowland regions of the highland. The formation of this type of state led to establishing settlements in valleys with fertile, but arid soils and reshaping the landscape. This was evidenced by large-scale hydraulic construction works and transformation of the thinly populated lowland regions into centers, supporting vital activities of the state, now with great concentrations of economic resources and population. The large-scale captures and resettlements carried out by the Urartian state filled the lack of the workforce. It effected nearly one million people, about three-fourths of the population of the highland.

Urartu was a palace/temple state with the economy characterized as “statism” and based on redistribution system. The palace/temple was the organizer of the economy. The main production group of the palace/temple economy formed the “dependents” or “state serfs”, who were called “lads” (“dependent (male) worker of immature age”) and “woman” (“dependent female worker”). The employment of slaves in the economy is not supposed.

The supreme landowner in Urartu was the palace/temple, while the system of landowning was connected with the conditional land-tenure. There were two forms of landowning: “temple/palace” (= institutional) and “communal”. Private land ownership was not practiced in Urartu.

Town building in Urartu was identified with the construction of the fortified palace/temple complexes, the “cities”, and the notion “town building” is applicable only because an inhabited section, *i.e.* the “outer town” was attached to that complex or situated nearby with the functions to maintain the center. The nature of Urartu as a palace/temple state excluded the existence of active city life in the country, and the residents or at least the major part of the residents of the “cities” had no private economy and survived at the expense of state provisions. This was the reason why the Urartian “cities” had a limited population. The number of the residents

corresponds to the functions carried out by that center and the “population” served and maintained the “city”. None of the Urartian “cities” were comparable in size or population to the Mesopotamian large towns.

Under the conditions of over-centralized state economy and due to the actual absence of a city life, the existence of free market relations could not be expected in Urartu. Obviously, the palace/temple economy obstructed the rise of the private business. For the same reasons, the internal economic ties in Urartu were extremely weak and the foreign trade was completely controlled by the state.

The Urartian Empire had a strong military organization. The formation of the standing army dates back to the late 9th c. B.C. The core of the army consisted of elite units of cavalry and chariotry recruited amongst the professional soldiers holding state fiefs in return for military service. In the second half of the 8th c. B.C. the army was reorganized according to the Assyrian model now consisted of the “royal cohort”, the provincial units, and the garrison troops.

The Urartian state was a successor of the II millennium B.C. northern Syrian and northern Mesopotamian (Mitannian / Middle Assyrian) traditions. The respiration of the II millennium B.C. traditions in Urartu is notable everywhere: in the form of organization of the economy, the landowning system, the town building and dwelling architecture, the Urartian cuneiform script. The II millennium B.C. background had also the social structure of the state represented by the ruling elite, class of the “servants”, class of the “subjects”, and class of the “dependents”. As a binding ring between the Urartian state and the II millennium B.C., traditions could serve any “land” or a colony situated on the Upper Tigris river basin and preserving the Mitannian/Middle Assyrian heritage.

Contacts between ruling and subdued groups in Urartu were minimized. The groups of subjected and dependent people, which formed the majority of the state’s population, had not integrated into the Urartian state system, had not become familiar with the Urartian imperial culture, and the language of the ruling class was not spread among them. Remaining beyond the Urartian state system, these groups were waiting for the collapse of the system and later filled the vacuum, which appeared after the collapse of the system.

A handwritten signature in black ink, appearing to read "B. J." or a similar combination of letters.